

ԱՍՈՐԻՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻՆԿԻՈՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ԿԵԱՆՔՈՒՄ ԺԲ-ԺԳ. ԴԱՐԵՐՈՒՄ¹

Կիրիկեան հայկական պետութիւնը, գտնուելով Արեւելքի եւ Արեւմուտքի շտապեցողութեամբ, իր աշխարհադրական դիրքի բերումով հարկադրուած էր սերտ յարաբերութիւնների մէջ մտնել օտար երկրներէ եւ ժողովուրդներէ հետ: Յայտնի է, որ ըստ իսկ Կիրիկեայում ու նրա շրջակայ զաւառներում հայերի վրդքին բնակւում էին զգալի թուով յոյներ, ասորիներ եւ ֆրանկներ: Այս իրավիճակը բնականաբար տարբեր ժողովուրդների համակցութեան անհրաժեշտ պայմաններ էր թելադրում: Տուեալ դէպքում մեզ չեն հետաքրքրում հայկական Կիրիկեայի միջպետական՝ քաղաքական եւ դիւանադիւանական կապերը, ոչ էլ զաւանաբանական խնդիրներէ շուրջ ծաւալուած երկարատեւ վէճերն ու քանակցութիւնները: Հետաքրքրող միայն այն հարցն է, թէ տարբեր ժողովուրդներէ՝ տուեալ դէպքում հայերի եւ ասորիների համակցութիւնը, անկախ քաղաքական եւ դաւանաբանական հանգամանքներից, ինչպէս է անդադարձել Կիրիկեան հայկական պետութեան մշակութային կեանքում:

1. Սոյն աշխատութեան մէջ յաճախակի վկայակոչուող հետեւեալ աղբիւրները նշել ենք յապաւումներով:

ՄՄ = Մաշտոցեան Մատենադարան. ծանոթագրութիւններում բերուած մատենադիտական ցանկերում արտացոլել ենք միայն Մաշտոցեան Մատենադարանի ձեռագրերի տուեալները, նկատի ունենալով, որ միւս հաւաքածոների ձեռագրերը, ընդարձակ ձեռագրացուցակների շնորհիւ, համեմատաբար մատչելի են մասնագէտներին:

MS = Chronique de Michel le Syrien, éd. et trad. par J.-B. Chabot, t. I-III (trad.), t. IV (texte), Paris, 1899-1924.

BH = Gregorii Barhebraei Chronicon Ecclesiasticum, ed. J.-B. Abbeloos et Th. J. Lamy, t. I-III, Lovanii, 1872-1877. Ինչպէս ընդունուած է ստորագիտական գրականութեան մէջ, Բար-Հեբրէոսի «եկեղեցական ժամանակագրութեան» միասնական էջակալում ունեցող առաջին երկու դրբերը նշել ենք որպէս I հատոր, իսկ երկրորդը՝ որպէս II: Թերեւս աւելորդ է միջնորդել, որ 1286 թուականից յետոյ ընկած ժամանակներին վերաբերող տեղեկութիւնները քաղուած են Բար-Հեբրէոսի «ժամանակագրութեան» չորսերկուկոյններէ:

Սակայն նախքան բուն նիւթին անցնելը, անհրաժեշտութիւն է զգացում ներկայացնել հայ-ասորական յարաբերութիւնների բնագաւառում ժԲ-ԺԳ. դարերում արձանագրուած թուրք նշանակարից իրադարձութիւնների համառօտ շարադրանքը՝ այդ յարաբերութիւնների սերտութեան մասին որոշակի պատկերացում վազմելու նպատակով:

Շուրջ 1144 թուականին, փախչելով Աոստանդնուպոլսի պատանդութիւնից եւ վերադառնալով Կիլիկիա², Թորոս իշխանը (1144-1168 թթ.) ապաստանում է Աթանասիոս ասորի մետրապոլիտի մօտ, որ նրան օգնութիւն է ցոյց տալիս իր հայրենի իշխանութիւնը վերանուանելու գործում³:

Շուրջ 1150 թուականին Յակոբ անունով մի ասորի վարդապետ, Մելիտենէ քաղաքից, նամակ է դրում Ներսէս Շնորհալուն, նրանից որոշ պարզարանումներ լսնդրելով Հայոց Եկեղեցու գաւառաբանական գերբերոշման վերաբերեալ, մասնաւորապէս Քրիստոսի մարմնի ապականացու, թէ՛ անապական լինելու հարցում: Շնորհալու թղթերում պահպանուել է այդ նամակի ընդարձակ պատասխանը հետեւեալ վերնագրով. «Ներսիսի եպիսկոպոսի եղբօր կաթողիկոսի Հայոց Գրիգորիսի, պատասխանի թղթոյն Յակոբայ ուրումն վարդապետի ասուրոյ, ի մայրաքաղաքին Մելիտենոյ Հայոց»⁴: Մասնադէտների կարծիքով Շնորհալու ասորի թղթակիցը նշանաւոր Դիոնիսիոս Բար-Սալիբիէն է⁵: Ըստ այդմ, նշուած թղթակցութիւնը տեղի է ունեցել հաւանաբար 1154 թուականից առաջ, քանի որ այդ թուականին Յակոբ Մելիտենացին ձեռնադրուել է Մարաշի եպիսկոպոս, ընդունելով Դիոնիսիոս անունը⁶:

2. Թորոսի վերադարձը եւ հայրենի իշխանութեան վերանուանումը այլեւայլ տարիներով է թուագրւում ինչպէս ակզրնադրիւրներում, այնպէս եւ պատմագիտական աշխատութիւններում:

3. MS, III, p. 281 = IV, p. 641. Ժ.-Բ. Շարոյի կարծիքով՝ յիշեալ Աթանասիոսը եղել է Անազաբարի մետրապոլիտը (տե՛ս MS, III, p. 281): Ըստ այլոց՝ խօսքը վերաբերում է Յակոբիկեան Եկեղեցու պատրիարք (1139-1166 թթ.) Աթանասիոս Ը.ին (տե՛ս Մ. ՕՐՄԱՆՅԱՆ, Ազգայնաւում, § 943. P. KAWERAU, Die Jakobitische Kirche im Zeitalter der syrischen Renaissance. Idee und Wirklichkeit, Berlin, Akademie - Verlag, 1960, S. 77). Ե. Տէր Մինասեանցը թիւրիմացաբար նշում է Աթանասիոս Է.ի՝ 1090-1129 տարիները (տե՛ս Ե. Տէր-ՄինԱՍՅԱՆ, Հայոց Եկեղեցու յարաբերութիւնները Ասորաց Եկեղեցիների հետ, էջ 186-ին, 1908, էջ 289):

4. Թորոս ընդհանրական արարեալ Բրիցս երանալ սուրբ Հայրապետին մերոյ տեսած Ներսիսի Շնորհալոյ, էջ 318-331:

5. Ղ. ԱԼԻՇԱՆ, Շնորհալի եւ պարագայ իւր, Վեներիկ, 1873, էջ 405: Ե. Տէր-ՄինԱՍՅԱՆ, Հայոց Եկեղեցու յարաբերութիւնները..., էջ 301: Լ. ԶԵԳԻՆՅԱՆ, Համալիւրթեան տրամախօսութիւն մը ԺԲ. դարում, Վեներիկ, 1978, էջ 20:

6. MS, III, p. 310-311.

1166 թուականին, Յակոբիկեան եկեղեցու պատրիարքութեան աթոռ բարձրանալուց անմիջապէս յետոյ, Միքայէլ Մեծը (1166-1199 թթ.) երկու ասորի եպիսկոպոսներէ ուղարկում է կաթողիկոս Ներսէս Ծնորդալու (1166-1173 թթ.) մօտ՝ Հայոց Եկեղեցու հետ միաբանութիւն հաստատելու առաջարկով: Այդ մասին տեղեկացնում է Ներսէս Ծնորդալին Մանուէլ կայսեր (1143-1180 թթ.) առաջին թղթի պատասխան նամակում⁷: Միքայէլը պատգամաւորներէ հետ նաեւ «գիր սիրոյ» է ուղարկում Հայոց կաթողիկոսին, ցանկութիւն յայտնելով տեսակցել նրա հետ: Ծնորդալին պատասխան նամակով իր գոհունակութիւնն է յայտնում այդ առթիւ եւ ողջունում Միքայէլի մտադրութիւնը: Այդ պատասխանը պահպանուել է Ծնորդալու «Նամականի»ում հետեւեալ վերնագրի տակ. «Նորին տեառն Ներսիսի գրեալ պատասխանի թղթոյն պատրիարքին Ասորւոց տեառն Միխայէլի»⁸: Բար-Հեբբէոսի մի ակնարկից կարելի է ենթադրել, որ Միքայէլ պատրիարքն, ըստ երեւոյթին, իրականացրել է իր մտադրութիւնը եւ 1168 թուականին այցելել է Կիլիկիա, իսկ այնտեղից մեկնել Անտիոք⁹: Նոյն Բար-Հեբբէոսի տուեալներով՝ Ներսէսը հետագայում եւս մի նամակ է ուղղել Միքայէլ Մեծին, հարցնելով նրա փորձուողը՝ յոյներէ հետ նախապատրաստուող միութեան խընդրում¹⁰:

1170-1171 թուականներին Հռոմկլայում ընթացող միութենական բանակցութիւններին մասնակցում են նաեւ Միքայէլ Մեծի պատգա-

7. ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ, Երեսնամյակ... Ներսիսի Ծնորդալու, էջ 158-159: «Այլ եւ որ զազգիին ասորոց ունէր զբարձրապատիւութիւն, ի նմին շարաթու, յորում դըլուխն մեր վերափոխեցաւ առ դըլուխն Բրիտոս, եւ նա ընկալաւ զվախճանն: Եւ յորժամ ժողովեցան եպիսկոպոսք ազգի իւրեանց եւ ձեռնադրեցին նոր պատրիարք, ի պատրիարքէ անտի եւ ի ժողովոց նպիսկոպոսացն առաջնցան առ մեզ երկու եպիսկոպոսք վասն միաբանելոյ ընդ ազգիս մերում, զոր եւ ընկալաւ սիրով եւ ասհմանեցաւ ի պատյան ժամու ժողով լինել արաջի մեր եւ խօսել առ իմեանս յԱստուածաշուէն գրոց, զի թէ զառնեցի աւանդութիւն ինչ ի միջի մերում, արտաքոյ աստուածադիր կանոնաց, բարձրուք յիրկոցունց կողմանց, եւ զնուազութիւնն լցոցուք միաբանական սիրով»:

8. «Թուուք ընդհանրական... Ներսիսի Ծնորդալու, էջ 235-237: [ՍԿ.] «Զգուարթուն եւ զարիւղոյն հովուականի զաստուածապատիւ պատրիարքիդ զտէր Միխայէլի ընկալաւ զգիր սիրոյ...», ապա՝ «Գրեալ էիք վասն տեսութեան միմեանց ցանկութիւն ունելոյ, եւ մեզ վկայեցաք ճշմարիտ լինել զբնութեան, զի ի մեր հոգեւոր սիրոյ առ ձեզ՝ Ծաննեցիք եւ զձերդ առ մերս նուաստութիւն. եւ յուսամք յԱստուած, զի զբարի ցանկութիւն մեր յայտարի ի վատարումն հասուցէ»:

9. BH, I, p. 543-544.

10. BH, I, p. 555-558. Նամակի թարգմանութիւնը տե՛ս Բ. ՏԷՐ-ՄԻՆԱՍՅԱՆ, Հայոց եկեղեցւոյ յարաբերութիւնները..., էջ 276-277: Լ. Զեքիեանը այս նամակի բարագառութիւնը երկրային է համարում. տե՛ս Լ. Զեքիեան, Հայա-միւրեքեանական տրամախօսութիւն մը..., էջ 58:

մաւորները. առաջին բանակցութիւններին ներկայ է լինում Յովհաննէս Գեառնացի եպիսկոպոսը, իսկ երկրորդին՝ Թէոդորոս Բար-Վաւրուհի, Միքայէլ Ասորու իմաստասէր աշակերտը¹¹: Բար-Հեբբէոսը, քաղելով Միքայէլից, մեծ տեղ է յատկացնում բանակցութիւնների ընթացքում Թէոդորոս Բար-Վաւրուհի խաղացած դերին, միտումնաւոր կերպով շեշտելով ասորիների գերազանցութիւնը հայերի նկատմամբ¹²:

1173 թուականին Գրիգոր Տղայի (1173-1193 թթ.) կաթողիկոսական օժմանը ներկայ են լինում Գեառնի Գրիգոր եւ Ռապանի Բարսեղ ասորի եպիսկոպոսները¹³: Դրանից յետոյ Գրիգոր Տղան ողջոյնի նամակ է յղում Միքայէլին, որտեղ նշում է, որ շատ կը ցանկանար նրա ձեռքից ստանալ իր օծութիւնը, բայց դրան խանգարել է թուրքական բանակների ներկայացրած վտանգը¹⁴: Պատասխան նամակում Միքայէլը ողջունում է Գրիգոր Տղայի գահակալումը, սակայն նրան կշտամբում է սիմոնիականութեան խնդրում¹⁵:

1178 թուականին հայ-յունական եկեղեցական միութեան խնդրով Հռոմկլայում գումարուած ժողովին¹⁶ ներկայ են լինում նաեւ Միքայէլ պատրիարքի ասորի պատուիրակները: Այդ մասին տեղեկացնում է Ներսէս Լամբրոնացին իր «Պատճառ խնդրոյ միաբանութեան...» աշխատութեան մէջ. «էր ընդ նոսին եւ յեպիսկոպոսպետին ասորոց վարդապետք եւ իմաստուն արք»¹⁷:

1180ական թուականներին վերջում կամ 1190ական թուականներին սկզբին, Թէոդորոս Բար-Վաւրուհի Միքայէլ Մեծի ղեմ մղած երկարատեւ գահակալական պայքարից յետոյ, ապաստանում է Կիլիկիայում եւ Գրիգոր Տղայ կաթողիկոսի միջնորդութեամբ Լեւոն Բ.

11. BH, I, p. 553-554.

12. BH, I, p. 553-556. Հայկական ձեռագրերում մի գրուցատիպ արձագանք է պահպանուել Հռոմկլայում ընթացող բանակցութիւններին Թէոդորոս Բար-Վաւրուհի ունեցած մասնակցութեան մասին. «Հաջորումն Ասորոյ տմեմն, աշակերտի տեառն Միխայիլ պատրիարքի Ասորոց առ Թեոփանէ իմաստասէր Յունաց, զոր առաքեալ էր Մանիլ վարարն առ կաթողիկոսն Հայոց Ներսէս եւ առ Միխայիլ խնդրելով ի նոցանէ Բ թնութիւն ասել զԳրիստոս...» (ՄՄ, ձեռ. Թ. 2058, ԺԴ դ., էջ 59բ): Զրոյցը, սակայն, քաղուած է Միքայէլ Ասորու «Ժամանակագրութեան» հայերէն թարգմանութիւնից (տե՛ս 1879 թ. հրատ., էջ 401. 1871 թ. հրատ., էջ 460):

13. MS, III, p. 354 = IV, p. 706.

14. MS, III, p. 354 = IV, p. 706.

15. MS, III, p. 355 = IV, p. 706.

16. Պատմադիւտական աշխատութիւններում Հռոմկլայի ժողովը թուարկուած է նաեւ 1177 եւ 1179 թուականներով: 1178 թուականի հիմնաւորումը տուել է բանասէր Ա. Բողոքանը Կիլիկեան հայկական իշխանութեանը նուիրուած իր մի անախպ ուսումնասիրութեան մէջ:

17. «Թուղթ ընդհանրական... Ներսիսի Շնորհաւայոյ», էջ 249:

իշխանի (1187–1219 թթ., 1198-ից թաղաւոր) կողմից նշանակւում Կիլիկիայի Յակոբիկ ասորիների պատրիարք¹⁸։ Հաւանաբար այդ իսկ տարիներին Թէոդորոս Բար-Վաչբունը մի ընդարձակ նամակ է դրում Տարսոնի մետրապոլիտին¹⁹, որի անձնաւորութեան տակ, հետազոտողների կարծիքով, պէտք է ենթադրել ներսէս Լամբրոնացուն²⁰։ Դա միանգամայն հաւանական է, քանի որ, ինչպէս նկատել է Ն. Ակինեան²¹, այդ նամակի մասին ակնարկ կայ Լամբրոնացու առ Լեւոն թղթում. «Պատրիարքն Ասորւոց՝ որոյ թղթերն առ մեզ, եւ բարի վիպյութիւնն մեր աղքատութեանս մեծահռչակ»²²։

1190ական թուականներին, Գրեգոր Տղայի եւ Թէոդորոս Բար-Վաչբունի մահուանից (1193 թ.) յետոյ, Կիլիկիոյ Լեւոն իշխանը Միքայէլ պատրիարքին սիրաշահելու նպատակով՝ ընծաներ է ուղարկում Յակոբիկեան եկեղեցու հոգեւոր կենտրոն Մար-Բարսուժմա վանքին²³, որը գտնւում էր Մելիտենէի մօտակայքում²⁴։

1198 թուականին Կիլիկիոյ Լեւոն Բ. իշխանի թաղադրութեան արարողութեանը այլ պատուաւոր հիւրերի շարքում, ներկայ է լինում նաեւ Ասորւոց Միքայէլ Մծ պատրիարքը։ Այդ մասին թանկարժէք տեղեկութիւն է պահպանուել Կիրակոս Գանձակեցու «Պատմութեան» մէջ. «եւ կաթողիկոսն ասորւոց, որ նստէր ի վանս սրբոյն Պարսուժայի եւ ի սահմանս Մելիտենոյ»²⁵։

1210ական թուականներին Լեւոն թաղաւորը Կիլիկիոյ Գաւիկաթի ասորական վանքի միաբանների խնդրանքով միջնորդում է Իկոնիայի սուլթանի առջեւ՝ Յովհաննէս ԺԴ-ին Յակոբիկեան եկեղեցու պատրիարք (1208–1220 թթ.) ճանաչելու համար, քանի որ Յակոբիկները հոգեւոր կենտրոնը՝ Մար-Բարսուժմայի վանքը գտնւում էր

18. MS, III, p. 386-387 = IV, p. 724.

19. J. GERBER, *Zwei Briefe Barwabhuns*, Halle, 1911, S. 11-67 (non vidi).

20. A. BAUMSTARK, *Geschichte der syrischen Literatur*, Bonn, 1922, S. 301. Ն. ԱԿԻՆԵԱՆ, ներսէս Լամբրոնացի արքեպիսկոպոս Տարսոնի. *Իձնանքն եւ զբական վաստակները հանդերձ ազգաբանութեամբ Պաշլաունեաց եւ Լամբրոնի Հեթմեանց*, Վիեննա, 1956, էջ 253։

21. Ն. ԱԿԻՆԵԱՆ, ներսէս Լամբրոնացի..., էջ 253։

22. «Տեառն ներսեսի Լամբրոնացոյ Տարսոնի եպիսկոպոսի Ատենաբանութիւն եւ թուղթ եւ ճառք», Վենետիկ, 1838, էջ 226։

23. BH, I, p. 587-590. Հմմտ. Ե. ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆՅ, Հայոց եկեղեցու յարաբերութիւնները..., էջ 282։

24. Բարսուժմայի վանքի մասին մանրամասն տե՛ս հետեւեալ հիմնաբար ուսումնասիրութիւնը. E. HONIGMANN, *Le couvent de Baršaumā et le Patriarcat Jacobite d'Antioche et de Syrie*, «Corpus Scriptorum Christianorum Orientalium», Vol. 146, Subs. 7, Louvain, 1954.

25. ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆԶԱԿԵՑԻ, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Կ. Ա. ՄԵՔԷՕՀԱՆՋԱՆԻ, Երևան, 1961, էջ 158։

սուլթանութեան սահմաններում²⁶: Ուշագրավ է, որ Յովհաննէս ԺԴ. այդ ճանաչումը ստանալուց յետոյ էլ, ժամանակ առ ժամանակ, բնակւում է Կիլիկիայի Գաւիկաթ եւ Պաքսեմատ ասորական վանքերում:

1244-1246 թուականներին Յակոբիկ ասորիները Կիլիկիայում իրագործում են մի շարք շինարարական ձեռնարկումներ²⁷: 1244ին Յեսու (Իշո) ասորի բժիշկը Միս մայրաքաղաքում կառուցում է սուրբ Բարսումայի եկեղեցին²⁸: 1245ին Իգնատիոս Բ. պատրիարքը (1222-1232 թթ.) մի այլ եկեղեցի է կառուցում Հայոց կաթողիկոսների նստավայր Հոռմկլայում²⁹: 1246ին նա մի եկեղեցի էլ կառուցում է Միս քաղաքում՝ նուիրուած սուրբ Աստուածածնին³⁰: Նոյն 1246 թուականին պատրիարքը կամուրջ է սրբում Ջայհան գետի վերայ, Մամեստիա քաղաքի մօտ³¹:

Մօտաւորապէս 1250 թուականին Հայոց Կոստանդին Ա. կաթողիկոսը (1221-1267 թթ.) յառանձին եկեղեցում հայերի համար մի սեւղան է պահանջում Իգնատիոս Բ. պատրիարքից: Վերջինս առերես խոստանում է, բայց չի կատարում իր խոստումը, դրանով շարժելով Հեթում Ա. Թադաւորի (1226-1270 թթ.) դայրոյթը³²:

1252 թուականին, երկար տարիներ Հոռմկլայում ապրելուց յետոյ, Իգնատիոս Բ. պատրիարքը այստեղ էլ կնքում է իր մահկանացուն եւ թաղում Հայոց եկեղեցու արեւելեան վողմում, ունեցածի մի մասը կտակելով Կոստանդին կաթողիկոսին եւ Հեթում Թադաւորին³³:

26. BH, I, p. 625-626. Ղ. Ալիշանն այդ դէպքը թուագրում է 1211 թուականով, երբ Լեւոնն արչաւում է Ռումի սուլթանութեան տիրոջները, պաշարում Կեսարիան, ապա հաշտութիւն կնքելով եւ պարգեւներ ստանալով, ետ է դառնում. տե՛ս Ղ. ԱԼԻՇԱՆ, Սիւռամ. Համագրութիւն հայրական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծադրո՞ծ, Վենետիկ, 1885, էջ 462, 514: Ի դէպ, Յովհաննէս պատրիարքի նկատմամբ Լեւոնի տառնմամբ Հովանաւորութիւնը չի սահմանափակւում միայն նշուած դատարով. միջնորդութիւնից առաջ Հայոց Թադաւորը պատրիարքին էր նուիրել նաեւ Գաւիկաթի վանքը. տե՛ս BH, I, p. 625-626.

27. Յակոբիկեան եկեղեցու շինարարական ձեռնարկումների մասին մանրամասն տե՛ս P. KAWERAU, Die Jakobitische Kirche, S. 119-120.

28. BH, I, p. 669-670.

29. BH, I, p. 665-666.

30. BH, I, p. 669-670.

31. BH, I, p. 671-672. Նոյն թուականին նա մի այլ կամուրջ էր կառուցել նաեւ Ջադիդ գետի վրայ՝ Անդրիոնի մօտ (Ամդ):

32. BH, I, p. 687-690. Հմմտ. Ե. Տէր-ՄԻՆԱՍՍԱՆՑ, Հայոց եկեղեցու յարաբերութիւններ..., էջ 283-285:

33. BH, I, p. 693-696. Հմմտ. Ղ. ԱԼԻՇԱՆ, Սիւռամ..., էջ 554: E. HONIGMANN, Le couvent..., p. 68. Թաղումը վաղմակերպում են Հայոց կաթողիկոսը եւ քաղաքի հայ եպիսկոպոսներ, մինչդեռ ասորի Եպիսկոպոսները

1253–1263 թուականներին դահակալած յաջորդ պատրիարքը՝ Յովհաննէս ԺԵ. Բար–Մաղանին, նոյնպէս հիմնականում նստում էր Կիլիկիայում, որտեղ գտնուող Պաքսեմատի վանքում էլ վախճանում է 1263 թուականին³⁴ :

1264 թուականին Յակոբիկեան եկեղեցու՝ Կիլիկիայում գումարուած եպիսկոպոսական ժողովը պատրիարք է ընտրում Գաւիկաթի վանքի վանահայր Իշոյին (Իգնատիոս Գ., 1264–1282 թթ.)³⁵ : Վերջինս, ըստ երեւոյթին, սերտօրէն կապուած է եղել Կիլիկեան իրականութեան հետ : Պատրիարք ընտրուելուց առաջ, ինչպէս նշուեց, եղել է Սսի մօտ գտնուող ասորական Գաւիկաթ վանքի վանահայրը³⁶, ընտրութիւնից յետոյ էլ մի քանի տարի ապրել է Կիլիկիայում, որտեղ եւ կնքելով իր մահկանացուն, թաղուել Կ Պաքսեմատի վանքի տաճարում³⁷ : Ի դէպ, նրա Յակոբ անունով եղբայրը այդ տարիներին քահանայութիւն էր անում Հռոմկայում³⁸ :

Նոյն 1264 թուականին Սսի Մայր եկեղեցում Գրիգոր Բար–Հեբրէոսը՝ ասորական գրականութեան վերջին փոշրագոյն ներկայացուցիչը, հանդիսաւոր արարողութեամբ օծւում է Յակոբիկեան եկեղեցու արեւելեան թեմերի կառաւարիչ՝ մափրիան (1264–1286 թթ.) : Այդ առթիւ նա մի գեղեցիկ ճառ է արտասանում եկեղեցում, որն իսկոյն թարգմանւում Կ հայերէնի³⁹ : Բար–Հեբրէոս եւս երկու անգամ այցելում է Կիլիկիա՝ 1268 եւ 1273 թուականներին⁴⁰ :

1283 թուականին Յակոբիկեան եկեղեցու պատրիարքական աթոռ է բարձրանում Հռոմկայի ասորի քահանաներից մէկը՝ Յակոբը, ստանալով Իգնատիոս Գ. անուանակոչութիւնը (1283–1293 թթ.)⁴¹ :

1292 թուականին, Հեթում Բ. թագաւորի (1289–1296, 1299–1301

միայն երկուսն են լինում պատրիարքի մօտ նրա մահուան ժամին՝ Գրիգոր Հիւնմանաւորցին եւ Բարսեղ Ռապանցին. տե՛ս **BH**, I, p. 693–694.

34. **BH**, I, p. 743–744. Հմտ. J. S. ASSEMANUS, *Bibliotheca Orientalis*, t. II, Romae, 1721, p. 377–379; E. HONIGMANN, *Le couvent...*, p. 69–72.

35. **BH**, I, p. 745–750; II, p. 431.

36. **BH**, I, p. 749–750.

37. **BH**, I, p. 767–768, 777–778.

38. **BH**, I, p. 779–780. Իգնատիոս Գ.ի ազգաբանութիւնը տե՛ս P. KAWERAU, *Die Jakobitische Kirche*, S. 121.

39. **BH**, I, p. 751–752. Թարգմանութիւնը վատարում է Թեոդորոս Շէկ (*Smaq-rāyā*) սոսեցի վանականը, որի մասին բացի նշուած էջերից տե՛ս նաեւ **BH**, I, p. 747–748.

40. **BH**, I, p. 769–770; II, p. 441–443. Հմտ. A. BAUMSTARK, *Geschichte*, S. 313

41. **BH**, I, p. 779–780. Հմտ. J. S. ASSEMANUS, *Bibliotheca Orientalis*, t. II, p. 381; E. HONIGMANN, *Le couvent...*, p. 73.

թթ.) հաւանութեամբ, Յակոբիկեան եկեղեցու արեւմտեան թեմերի կալիսկոպոսները Կիլիկիայում պատրիարք են ընտրում Գաւիկաթի վանքի վարդապետներից մէկին՝ Միքայէլ Բ. Բարսումայի (1292-1312 թթ.), ի հակադրութիւն Մարգիւնի շրջակայքի եպիսկոպոսների ընտրած Իգնատիոս Ե. Բար-Վահիբ պատրիարքի (1292-1333 թթ.)⁴²:

Արդ, սկսած 1292 թուականից Յակոբիկեան եկեղեցին բաժանւում է երեք պատրիարքութիւնների, որոնց կենտրոններն էին Սիսը, Մելիտենէն եւ Մարգիւնը: Սաի պատրիարքական աթոռին բացի վերոյիշեալ Միքայէլ Բարսումայից յաջորդաբար նստում են եւս երկու պատրիարքներ՝ Միքայէլ Գ. (1313-1349 թթ.) եւ Բարսեղ (1349-1387 թթ.): ԺԴ. դարի առաջին կէսին Յակոբիկեան եկեղեցու կեանքում նշանակալից դեր է խաղում յատկապէս Սաի պատրիարքութիւնը, որի իրաւասութիւնը տարածւում էր ոչ միայն «արեւմտեան» երկրների վրայ, այլեւ մինչեւ Ատրպատականի Մարաղա եւ Թաւրիզ քաղաքները: Կիլիկիոյ Յակոբիկ պատրիարքների պաշտօնական նստավայրը թէեւ Միսն էր, բայց նրանք սովորաբար նստում էին Մամեստիայի մօտ գտնուող Գաւիկաթի վանքում: Սաի պատրիարքութիւնը Կիլիկեան հայկական պետութեան անկումից յետոյ, զրկուելով Հայոց Թագաւորների հովանաւորութիւնից, դադարում է գոյութիւն ունենալուց⁴³:

1349 թուականին տեղի է ունենում հայ-ասորական յարաբերութիւնների պատմութեան մէջ արձանագրուած վերջին քիչ թէ շատ նշանակալից զէպքը. Բարսեղ կամ Գաբրիէլ Մելիտենացին «Անտիոքի եւ Ասորիքի պատրիարք» է ընտրւում Կիլիկիոյ Սիս քաղաքում, քանի որ այդ ժամանակ Մար-Բարսումայի վանքը աւերուած էր: Ի դէպ նրա նախորդը՝ Կոստանդին պատրիարքը, այդ աւերածի պատճառով Սիս էր տեղափոխել վանքի գլխավորանի արժէքաւոր ձեռագրերը⁴⁴:

Ինչպէս տեսնում ենք, աւելի քան երկու հարիւր տարի Յակոբիկեան եկեղեցին անմիջական կապերի մէջ է եղել Կիլիկեան հայկական պետութեան հետ, իսկ ողջ ԺԳ-ԺԴ. դարերում ուղղակի գերտնուել նրա հովանաւորութեան ներքոյ, որի արտայայտութիւնն է մասնաւորապէս հայ Թագաւորների եւ կաթողիկոսների միջոցով դերը մի շարք պատրիարքների ընտրութեան գործում⁴⁵: Այդ չիում-

42. BH, I, p. 783-784. Հմմտ. J. S. ASSEMANUS, *Bibliotheca Orientalis*, t. II, p. 382.

43. BH, I, p. 783-798. Հմմտ. E. HONIGMANN, *Le couvent...*, p. 174-175.

44. Տե՛ս E. HONIGMANN, *Le couvent...*, p. 51.

45. Նկատի ունենալով հայ-ասորական յարաբերութիւնների իրաւիճակը ԺԳ. դարում՝ Ե. Տէր-Մինասեանց գրում է. «Այնպէս է երեւում, թէ հայերն այս

ներին անշուշտ նպաստել է այն հանդամանքը, որ քուն Կիլիկիայում ասորի բնակչութիւնը զգալի թիւ է կազմել:

Այսպէս, օրինակ, ԺԳ. դարի Անանուն Եղեասցի ժամանակագրի տուեալներով՝ 1130ական թուականներին «Աղանա քաղաքը հարուստ էր քրիստոնեաներով, և նրա ողջ բնակչութիւնը Յակոբիկներ էին»⁴⁶: Աւելի ուշագրաւ է ԺԳ. դարի առաջին կէսի հայ մատենադիր Վարդան Այդեկցու հետեւեալ տեղեկութիւնը. «Ի տուն իշխանութեանս Հայոց են Ասորի փշխանք եւ Հոռոմք, եւ Ասորի սլաներ եւ Հոռոմ եւ Վրացի. եւ ունին պատիւ եւ ապրանք ի տանէս Հայոց, եւ կան խաղաղութեամբ եւ սիրով ամէն ազդ յիւր եկեղեցոյն կարգքն եւ ի սահմանն, եւ զԱստուած փառաւորեն»⁴⁷: Ասորիները Կիլիկիայում աւելի են շատացել հաւանաբար մոնղոլական արշաւանքներ ընթացքում, որի մասին կարծես ակնարկուում է Կիրակոս Գանձակեցու «Պատմութեան» մէջ. «Լցաւ եւ երկիրն»⁴⁸ բազմութեամբ մարդկան անարուեստից եւ արուեստաւորաց, որք ժողովեցան յամենայն կողմանց փախուցեալք յաւերմանէ թաթարին, որք եկեալ յարեւելից հիւսիսոյ տապալեցին զամենայն տիեզերս»⁴⁹: Ըստ երեւոյթին, դրա հետ է կապուած 1240ական թուականներին Կիլիկիայում Յակոբիկ-

շրջանում փորձել են ասորւոց եկեղեցին ենթարկել իրենց, մի տեսակ ըստորադասութիւն տեղծել նրանց համար: Նրանք խառնուում են ասորւոց եկեղեցու ներքին գործերին. եւ կարող էին այդպէս վարուել այն պատճառով, որ ասորի Յակոբիկների մի մեծ հատուած դուռնում էր Հայոց «Ռուբինեանց» թագաւորներ իշխանութեան ներքոյ. տե՛ս Ե. ՏԵՐ-ՄԻՆԱՍՍԵԱՆ, Հայոց եկեղեցու յարաբերութիւնները..., էջ 283: Ե. Թօփճեանն այդ առթիւ արտայայտուում է ստեղծի փտուակ. «Արդէն 13րդ դարուն սկիզբը Հայերը կրօնական այնչափ մեծ ազդեցութիւն ձեռք բերած էին Ասորւոց վրայ, որ տկան զանոնք եկեղեցականապէս միացնելու մասին մտածել»։ տե՛ս Ե. ԹՕՓՃԵԱՆ, Հայ եւ ասորի եկեղեցիներու յարաբերութիւնները (մատենաբանական), «Լոյս» շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1905, էջ 1054:

46. ANONYMI AUCTORIS chronicon ad annum Christi 1234 pertinet. II, ed. J.-B. Chabot, «Corpus Scriptorum Christianorum Orientalium», Vol. 82, Syr. 37, Louvain, 1916, p. 109. ԱՆՈՆՈՒՆ ԵՒՆՍԱՍԻ, Ժամանակագրութիւն. Ժարգմանութիւն բնագրից, առաջաբան եւ ծանօթագրութիւններ Լ. Յ. ՏԵՐ-Պետրոսեանի, ՉՕտար աղբիւրները Հայաստանի եւ Հայերի մասին 12-Ասորական աղբիւրներ Բ», Երեւան, 1982, էջ 81: Թէ՛ւ այս տեղեկութիւնը չափազանցուած պէտք է համարել, այնուամենայնիւ ասորիները մետրապոլիտ ունենալու համար քաղաքում զգալի թիւ պէտք է կազմած լինէին. «Այնուդի մետրապոլիտն այդ ժամանակ Թովհանէսն էր՝ իւր Բար-Արիքան՝ Ուհհայից, - դրում է ժամանակագրը» (Աճ)։
47. Ե. Ս. ԱՆՍԱՍԵԱՆ, Վաղարամ Այգեկցիի իր. մոտայայտ երկերի լոյսի տակ (արտատուած «Բազմապէս» 1968, Թ. 7-12 բացառիկէն), Վենետիկ, 1960, էջ 47:
48. Նկատի ունի Կիլիկիան:
49. ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆԶԱԿԵՑԻ, Պատմութիւն Հայոց, էջ 190:

ների գործունէութեան, մասնաւորապէս շինարարական ձեռնարկում-ների աշխուժացումը:

Կիլիկիայում բնակուող ասորիները քնակաճարար ունէին իրենց եկեղեցական կազմակերպութիւնն ու հոգեւոր կենտրոնները: Ինչպէս վերը բազմիցս նշուեց, Կիլիկիայում գործող Գաւիկաթի եւ Պաքսեմատի ասորական վանքերի միաբանները յաճախ նշանակալից դեր են խաղացել Յակոբիկեան եկեղեցու գերագոյն պաշտօնէութեան ղեկավարութեան գործում⁵⁰: Ըստ Բար-Հեբրէոսի՝ ԺԳ. զարի կէսերին բազմաթիւ ասորի հոգեւորականներ են եղել նաեւ Հոռմկլայում, ինչպէս՝ Իշո քահանան եւ իր որդիները, Յակոբ երէցը, Շմոն (Շմաւոն, Սիմէոն) քահանայ-բփղիլը՝ իր կողմնակիցներով, Իշո-Շանկիթը եւ ուրիշներ⁵¹:

Բացի վանական հաստատութիւններից՝ Կիլիկիան հայկական պետութեան սահմաններում ԺԲ-ԺԴ. դարերում ընդհատումներով գոյութիւն են ունեցել նաեւ հինգ Յակոբիկեան եպիսկոպոսութիւններ: Դրանք են.

Ադամա. յիշատակուած 1136 թ.⁵²

Անագարբա. յիշատակուած 1166-1199 թթ.

Ջայխան. յիշատակուած 1139-1199 թթ.

Սիւ. յիշատակուած 1264 թ.

Տարսոն. յիշատակուած 1166-1199 եւ 1264 թթ.⁵³:

Դրանց թերեւս պէտք է գումարել նաեւ հայկական պետութեան ազդեցութեան ոլորտում գտնուող չրջակայ պաւլառների՝ Մարաշի, Ռապանի եւ Գեսունի Յակոբիկեան եպիսկոպոսութիւնները: Աւելորդ է ընդգծել, որ սկսած 1240ական թուականներից Սիւ քաղաքը դարձել էր Յակոբիկեան եկեղեցու պատրիարքների մշտական նստավայրերից մէկը⁵⁴:

Կիլիկիոյ քնակչութեան բազմատարրութիւնը եւ հայ-յունական միութենական տրամախօսութիւնները աստիճանաբար Հայոց եկեղեցու հոգեւոր առաջնորդների մօտ ձեւաւորում են տարբեր ժողովուրդների եւ եկեղեցիների խաղաղ գոյակցութեան որոշակի մտածողու-

50. Գաւիկաթի եւ Պաքսեմատի վանքերի մասին տե՛ս Ղ. ԱԼԻՇԱՆ, Սիււաւան..., էջ 221-222: P. KAWERAU, *Die Jakobitische Kirche*, S. 116-117.

51. Հմմտ. E. HONIGMANN, *Le couvent...*, p. 68-69.

52. ANONYMI AUCTORIS chronicon, p. 109. ԱՆՈՆՈՒՆ ԵՊԻՍԿՈՍԻ, Ժամանակագրութիւն, էջ 81:

53. Անագարբայի, Ջայխանի, Սիւ եւ Տարսոնի Յակոբիկեան եպիսկոպոսութիւնների մասին տե՛ս P. KAWERAU, *Die Jakobitische Kirche*, S. 109-114.

54. Հմմտ. E. HONIGMANN, *Le couvent...*, p. 45, 68, 167, 175.

Թիւն, որ իր քարձրագոյն արտայայտութիւնն է գտնում Ներսէս Շնորհալու գաղափարներում: Շնորհալու տեսակէտն այս հարցում, բանասէր Լ. Զէքիեանի յստակ լռորոշմամբ, հանգում է հետեւեալին. «Միութեան համար պահանջուած միակ պայմանը հաւատքի ճշմարտութիւնն է, միացած՝ եղբայրսիրութեան: Ծէսերու, աւանդութիւններու եւ նոյնիսկ դաւանաբանական քանաձեւումներու տարբերութիւնները, — այս վերջիններս՝ երբ չեն աղարտեր հաւատքի խորքը, — երկրորդական կը մնան: Հետեւաբար պէտք չէ երկուստեք պահանջել որեւէ քան մը՝ որ անհրաժեշտ չըլլայ հաւատքի միութեան համար: Ընդհակառակն հարկ է ունենալ, փոխադարձաբար, իրարու աւանդութիւններուն նկատմամբ մեծազոյն յարգանքը՝ փոքր նուիրական մատուցները իւրաքանչիւր ժողովուրդի կամ մասնական Եկեղեցիի եւ իւր արտայայտութիւնը անոնց ներքին ապրումներուն»⁵⁵:

Մեծագոյն յարգանք միմեանց աւանդութիւնների նկատմամբ, — ահա թէ որն է, Հայոց եկեղեցու առաջնորդների ըմբռնմամբ, ժողովուրդների համակեցութեան եւ եկեղեցիների միութեան անհրաժեշտ պայմանը: Այս գաղափարը, որոշակի պատմական հանդամանքների արծարծման առիթով, փոքր ցայտուն դրսեւորումն է գտնել նաեւ Վարդան Այգեկցու «Վասն շատահաջ քննողացն յանդիմանութիւն» խրատական գրութեամբ, որի յայտնաբերման եւ հրատարակութեան պատիւը պատկանում է Թ. Անասեանին⁵⁶: Նկարագրելով Հիւսիսային Ասորիքի Տեպա, Մարաթա, Նաւֆա եւ Պուշարիք վայրերում կողք-կողքի բնակուող հայերի, յոյների եւ ասորիների փոխարարեցութիւնները, Այգեկցին գրում է. «Հայն ասէ թէ ե'ս եմ լաւ եւ ընտիր ջրիստոնեայ, եւ հայհոյէ անմտութեամբ պշոռոմն եւ զԱսորին: Եւ Հոռոմն ասէ հպարտութեամբ թէ ե'ս եմ ազգ առաջին, սուրբ եւ գիտնական եւ ուղեղ հաւատ, եւ Հայն եւ Ասորին ոչ են ի կարգս ջրիստոնէութեան եւ ոչ ունին առ Աստուած քաժին, եւ այսպէս նախատէ եւ հայհոյէ: Իսկ Ասորին ասէ Ժաժուկ նենդութեամբ եւ կեղծաւորութեամբ թէ ե'ս եմ ընտիր ջրիստոնեայ եւ ունիմ անարատ հաւատ եւ սուրբ կարգ, եւ Հոռոմն եւ Հայն լցեալ են չար հերժուածաւք, աւտար են յԱստուծոյ եւ զՅիսուս Բրիստոս ոչ ճանաչեն եւ դժոխոց են Ժառանգ»⁵⁷: Քրիստոնեայ ժողովուրդների այս փոխադարձ անհաղադարձականութեանը Այգեկցին նախանձով հակադրում է մահմեդականների միաբանութիւնը. «Ընդէ՞ր ոչ հայիք ի տունն Մսլիմնաց, թէ քանի ազգ են քաժանեալ լեզուաւք, եւ կան խաղաղութեամբ եւ սիրով առ իրար, ի մի սահման եւ ի կարգ, զոր առաջ-

55. Լ. ԶԵՔԻԵԱՆ, Համախառնակամ տրամախօսութիւն մը..., էջ 33-34:

56. Թ. Ս. ԱՆԱՍԵԱՆ, Վարդան Այգեկցի..., էջ 44-48:

57. Ամը, էջ 45:

նորդն իւրեանց Մահմէտ կարգաւորեաց եւ սահմանեաց զնոսա: Եւ դուք ի մի Քրիստոս կոչեցայք եւ ի մի աւաղան մկրտեցայք, ի մի Հայր եւ ի մի սուրբ Հոգի լուսաւորեցայք, եւ դարձեալ նախատէք զիրար եւ հայհոյէք»⁵⁸: Այս տխուր փաստերն արձանագրելուց յետոյ Արքեպիսկոս յոյներին, հայերին եւ ասորիներին է ուղղում հետեւեալ կոչը. «Աղաչեմ զձեզ, որդեակք, ամէն ազգ կալէք զիւր եկեղեցւոյն սահմանն եւ սովորութիւնն եւ զկարգն՝ զպատարագելն, զտաւնելն, զսահմանն, զմկրտելն, եւ առ իրար սիրով կեցիք եւ փաղաղութեամբ, որ Քրիստոս հանգչի առ ձեզ: ... եւ վասն կարգաց եկեղեցւոյ մի՛ քննէք եւ բանալէ՛ճ լինիք եւ անհանգստիք»⁵⁹: Աւելի առաջ զնալով, Արքեպիսկոս շեշտում է, որ ազգային եւ եկեղեցական սահմանափակուածութիւնն իրական կեանքում փորձութեան չի դիմանում, քանի որ կեանքը թելադրում է իր պայմանները, եւ նոյնիսկ հոգեւոր առաջնորդների յորդորներն ու կարգադրութիւնները յաճախ անտեսւում են ժողովրդական զանգուածների կողմից. «Յառաջադէմ դրեցին Հռոմոց եւ Ասորոց եւ Հայոց առաջնորդքն եւ հայրապետն, եւ պնդով նզովս եղին ի վերայ եւ ասացին, թէ ամենայն ազգ քրիստոնեայ թող յիւր ազգէն առնեն խնամութիւն, որ չխառնակի մի ազգն ի միւսն, եւ յիւր ազգն մկրտի եւ հաղորդի. եւ այս բարի էր դորս սահմանեցին, զի, ո՛ր գիտէ, թէ վրէժը հերձուած ինչ ի մի ազգն, նա չխառնէր ի միւս ազգն: Բայց ժողովուրդը ազգացն ոչ պահեցին զհրամանս առաջնորդաց իւրեանց: Եւ ահա ի Կեսարիա եւ ի Մելիտիի, յՍուհա եւ յԱնտիոք, եւ քի մեր աշխարհս Կիլիկեցոց անխտիր կովսնամեանս եւ կուառնուն հարսն զդատերս միմեանց Ասորին եւ Հայն եւ Հռոմն, եւ ոչ կարացին խափանել զնոսա ոչ հին առաջնորդքն եւ ոչ նորս: Լի՛ք եւ դուք այսպէս, եւ պաշտեցէք ամենայն ազգ զիւր կարգն եւ զսահմանն յիւր եկեղեցին»⁶⁰:

Մենք յատուկ նպատակով հանդամանօրէն կանգ առանք Վարդան Արքեպիսկոս «Վասն շատահալ քննողացն յանդիմանութիւն» խորատի վրայ, որովհետեւ մեր վարժիչով այն ճշգրիտ պատկերացում է տալիս ժամանակի ազգային փոխյարաբերութիւնների ջնադաւաւում տիրող մթնոլորտի մասին: Այս տեսակէտից վերլուծելով ԺԻԺԳ. դարերի հայ-ասորական յարաբերութիւնների անցուղարձեւը, տեսնում ենք, որ դրանք հիմնականում ընթացել են Շնորհալու եւ Արքեպիսկոս զծած փոխադարձ հանդուրժողականութեան ուղիով: Հայերի եւ ասորիների երկարատեւ վիճաբանութիւնները պաշտամունքի սովորութիւնների շուրջը, որոնք այնքան սրուել էին մասնաւանդ ԺՎ.

58. Ամդ, էջ 46:

59. Ամդ, էջ 47:

60. Ամդ, էջ 47-48:

դարում եւ ժԲ. դարի առաջին կէսին⁶¹, աստիճանաբար սկսում են մեղմանալ, իսկ ժԲ. դարի կէսերից յետոյ վերջնականապէս դադարում են: Վերջին ասորական հակաճառութիւնը Հայերի դէմ գրուել է շուրջ 1166 թուականին Դիոնիսիոս Բարձրադիրի կողմից⁶²: Դրանից յետոյ Հայոց եւ Յակոբեկեան եկեղեցիների միջեւ, գոնէ պաշտօնական մակարդակի վրայ, հաստատուել են ընդհանուր առմամբ բարեկամական յարաբերութիւններ, որոնք շարունակուել են ընդհանուր մինչեւ ժԴ. դարի կէսերը⁶³:

Նշուած պատմական հանգամանքներում Հայերի եւ ասորիների տեսական եւ անմիջական շփումները քնականաբար չէին կարող հետքեր չթողնել նաեւ հոգեւոր մշակութի մասարձեղում: Եւ յիշուել, փաստերը ցոյց են տալիս, որ ժԲ-ժԴ. դարերում ասորի գիտնականները որոշակի նպաստ են բերել Հայկական Կիրիկիոյ մշակութի դարազարման գործին, որ ունեցել է հետեւեալ երկու հիմնական դրսեւորումները.

ա. Ասորի բնագէտներն ու բժիշկները Հայերին են փոխանցել ասորական եւ արաբական գիտութեան նշանակալից նուաճումները.

բ. Որոշ ասորի վարդապետներ՝ հայ խմբագիրներին աշխատակցութեամբ, Հայերին են թարգմանել ասորական գրականութեան մի շարք արժէքաւոր յուշարձաններ:

* * *

Կիրիկեան շրջանից մեղ հասած հարուստ բժշկական եւ բնագիտական գրականութեան մէջ կան երեք ուշադրաւ աշխատութիւններ՝

61. Հմմտ. Ե. ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ, Հայոց եկեղեցու յարաբերութիւնները..., էջ 236-264: Ե. Ս. ԱՆԱՍՅԱՆ, Վարդապետ Այգեկցիմ..., էջ 28-32:

62. Հրատ. A. MINGANA, Woodbrooke Studies, vol. IV, Cambridge, 1931, էջ 71-111 (ասորերէն բնագիր), էջ 7-70 (անգլերէն թարգմանութիւն): Հայերէն թարգմանութիւնը տե՛ս Գ. ԷՍԱՊԱՆՅԱՆ, Դիոնիսիոս Բարսալիքիի Հակամատուքիւնը Հայոց դէմ, Վիեննա, 1938: Հակաճառութիւնը թուագրում է բուն իսկ գրուածքի հետեւեալ տեղեկութեան հիման վրայ. «440 տարի առաջ Հայերը Սիրիոյ երկիրը մտան, մեր հողը, մեր վանքերը եւ գիւղերը բռնեցին. եւր մեր պատրիարքն էր մար Աթանաս, որ Յունաց 1037 թուականին՝ Հայոց եւ անոնց Յովհաննէս կաթողիկոսին հետ ներքին Մանագլիքոյ մէջ միութիւն ըրաւ» (Գ. ԷՍԱՊԱՆՅԱՆ, Դիոնիսիոս Բարսալիքիի Հակամատուքիւնը..., էջ 87): Մանագլիքոյ ժողովի թուականին՝ 726 (= Յունաց կամ Սելեւկեան 1037) գումարելով Դիոնիսիոսի նշած 440 տարիների տարբերութիւնը, ստանում ենք 1166 թուականը:

63. Այդ բարեկամական յարաբերութիւնները խոնգարուել են միայն երկու մասնակի դէպքի՝ Թէոդորոս Բարձրահոյնի պատրիարքութեան (1180-90ական թթ.) եւ Խառանի եկեղեցու խնդրի (շուրջ 1250 թ.) առթիւ, որոնց մասին հանդամանօրէն խօսուեց վերը՝ Հայաստանական շփումների նկարագրութեան ժամանակ:

վերադրուած ասորի հեղինակների: Դրանք են՝ Աբուսայիդի «Յա-
ղաբս կաղմութեան մարդոյն» մարդակազմական երկասիրութիւնը⁶⁴,
Իշոխ քահանայի «Գիրք ի վերայ ընդլեւան հանրական եւ մասնա-
կան» բնադիտական-տեսական աշխատութիւնը⁶⁵ եւ Ֆարաճ Ասորու
«Բժշկարան ձիոյ եւ առ հասարակ գրաստնոյ» անասնաբուժական
ձեռնարկը⁶⁶: Կիլիկեան հայկական պետութեան սահմաններում գոր-

64. ԱՐՈՒՍԱՏԻԻ, Յաղագս կաղմութեամ մարդոյն, աշխատասիրութեամբ Ս. Ա.
Վարդանեանի, Երևան, 1974: Մարտոցեան Մատենադարանում պահուած են
Աբուսայիդի աշխատութիւնը պարունակող հետեւեալ ձեռագրերը. Թ. 3653,
էջ 245ա-251բ (ժե. Դ.), Թ. 4268, էջ 259ա-265ա (ժե. Դ.), Թ. 6644, էջ 78բ-84ա
(1532 Բ.), Թ. 549, էջ 11ա-41ա (1560 Բ.), Թ. 1713, էջ 390բ-394բ (ժԶ-ժԷ. Դ.),
Թ. 1978, էջ 400բ-111ա (1605-6 Բ.), Թ. 1424, էջ 325ա-332ա. Բերի (1620 Բ.),
Թ. 466, էջ 222ա-236բ (1628 Բ.), Թ. 3138, էջ 358բ-366բ (1631 Բ.), Թ. 7100,
էջ 117ա-138ա (1635 Բ.), Թ. 715, էջ 154ա-179բ (1645 Բ.), Թ. 2111, էջ 17ա-
132ա-134բ (1654-75 Բ.), Թ. 8397, էջ 11ա-41ա (1655 Բ.), Թ. 9709, էջ 17ա-
42ա (1661 Բ.), Թ. 2794, էջ 228ա-234բ (1667 Բ.), Թ. 497, էջ 485բ-500ա (1671
Բ.), Թ. 2268, էջ 141ա-163ա (1683-9 Բ.), Թ. 2448, էջ 167ա-193ա (1687-9 Բ.),
Թ. 463, էջ 165ա-175բ (ժԷ. Դ.), Թ. 464, էջ 56ա-72բ (ժԷ. Դ.), Թ. 706, էջ
212ա-235բ (ժԷ. Դ.), Թ. 1775, էջ 130ա-133բ. Բերի (ժԷ. Դ.), Թ. 1784, էջ
223ա-232ա (ժԷ. Դ.), Թ. 1814, էջ 193ա-196բ (ժԷ. Դ.), Թ. 1816, էջ 367ա-374բ
(ժԷ. Դ.), Թ. 1887, էջ 109ա-122բ (ժԷ. Դ.), Թ. 2166, էջ 61բ-74ա (ժԷ. Դ.),
Թ. 2332, էջ 177ա-179բ (ժԷ. Դ.), Թ. 3276, էջ 82բ-86ա (ժԷ. Դ.), Թ. 4283,
էջ 149ա-162բ. Բերի (ժԷ. Դ.), Թ. 5616, էջ 65ա-78ա. Բերի (ժԷ. Դ.), Թ.
6712, էջ 2ա-3բ, 5ա-6բ. Բերի (ժԷ. Դ.), Թ. 7049, էջ 5ա-40ա (ժԷ. Դ.), Թ. 7749,
էջ 1ա-12ա. Բերի (ժԷ. Դ.), Թ. 8458, էջ 25ա-44ա (ժԷ. Դ.), Թ. 9598, էջ
213ա-228ա (ժԷ. Դ.), Թ. 9845, էջ 1ա-15ա (ժԷ-ժԸ. Դ.), Թ. 5622, էջ 127բ-
174ա (1700 Բ.), Թ. 7262, էջ 1ա-12ա (1732 Բ.), Թ. 723, էջ 270ա-271ա.
Հասուած (1734 Բ.), Թ. 3129, էջ 199ա-203բ (1743 Բ.), Թ. 10039, էջ 13բ-20բ
1776 Բ.), Թ. 8493, էջ 1ա56ա (1791 Բ.), Թ. 550, էջ 2ա-11բ (ժԸ. Դ.),
Թ. 1815, էջ 210ա-214բ (ժԸ. Դ.), Թ. 3128, էջ 381ա-385ա (ժԸ. Դ.), Թ. 5728,
էջ 99ա-114ա (ժԸ. Դ.), Թ. 7127, էջ 2ա-22ա (ժԸ. Դ.), Թ. 8487, էջ 56ա-80ա
(ժԸ. Դ.), Թ. 10244, էջ 1ա-33բ. Հայաստանի թուրքերէն (ժԸ-ժԹ. Դ.), Թ. 4337,
էջ 126ա-132ա (1818-58 Բ.), Թ. 6233, էջ 5ա-10ա (1831-4 Բ.), Թ. 10234,
էջ 1ա-10բ. Խմբագրուած (1852 Բ.): Աբուսայիդի ձեռագրերի ցանկը կաղմբկա
ձեռագրէն ուղղուել ենք Յ. Մկրտչեանի մատենադիտութիւնից. տե՛ս Ե. ԱՆԱՍԻՄՆ,
Հայկական մատենագիտութիւն, Հատ. Ա, Երևան, 1959, էջ 67-75:
65. ԻՇՕՆ, Գիրք ի վերայ ընդլեւան. ձեռական բնագիրը, Թարգմանութիւնը գրա-
բարից ուսերէն եւ առաջարկելով Ստեփան Վարդանեանի, Երևան, 1979: Իշոխի
աշխատութիւնը առկայ է Մարտոցեան Մատենադարանի հետեւեալ ձեռագրերում.
Թ. 1751, էջ 303ա-311ա (ժԴ. Դ.), Թ. 3653, էջ 233ա-244բ (ժԷ. Դ.), Թ. 4268,
էջ 248ա-258բ (ժԷ. Դ.), Թ. 2014, էջ 198ա-209բ (1595 Բ.), Թ. 3078, էջ 86բ-
93բ (1589-1608 Բ.), Թ. 1713, էջ 384ա-390ա (ժԶ-ժԷ. Դ.), Թ. 745, էջ 153ա-
187ա (1607 Բ.), Թ. 5587, էջ 239բ-251ա (1617 Բ.), Թ. 3982, էջ 351բ-357բ
(1621 Բ.), Թ. 3138, էջ 344բ-357բ (1631 Բ.), Թ. 3449, էջ 92բ-107բ (1635
Բ.), Թ. 3519, էջ 182ա-190բ (1647 Բ.), Թ. 3071, էջ 136բ-144ա (1651-61 Բ.),
Թ. 2111, էջ 127բ-132ա (1654-75 Բ.), Թ. 7004, էջ 100ա-116ա (1660 Բ.),
Թ. 1769, էջ 203բ-214ա (1664 Բ.), Թ. 1768, էջ 187ա-174բ (ժԷ. Դ.), Թ.

ծած այս երեք ասորի հեղինակներին միացնում է դիտական դործունեությունն ընդհանուր եղանակը — բնագիտությունն եւ բժշկագիտությունն քննադատաբար ասորիների եւ արաբների կուտակած փորձի փոխանցումը։ Կայ ընթերցողին։ Նշուած երկերի ասորերէն կամ արաբերէն սկզբնաղբերը առայժմ չեն յայտնաբերուած։ Սակայն, ինչպէս իրաւացիօրէն ենթադրում են հետադասողները, բացառուած չէ, որ նրանք սկզբից եւեթ շարադրուած լինեն հայերէնով՝ բայց արեւելեան աղբիւրների հիման վրայ⁶⁷։ Ասորի բժէշկները եւ բնագիտողները դերը Կիլիկիայում հիմնաւորապէս վեր է հանուած արդի բժշկագիտական գերականութեան մէջ՝ Լ. Յովհաննիսեանի, Ա. Կծոնեանի եւ մանաւանդ Ս. Վարդանեանի աշխատութիւններում⁶⁸։ Այդ պատճառով ասորեւ մենք կը սահմանափակուենք միայն մի քանի բանասիրական լինդիւրների քննութեամբ, որոնք մեր կարծիքով, առայժմ պահանջուած ուշադրութեան չեն արժանացել։

1. Արուսայիդ բժշկի մասին «Յաղազս կազմութեան մարդոյն» աշխատութեան առաջարկում պահպանուել է հետեւեալ միջին տեղեկութիւնը. «Եղեն ճարտարք յազդս ազդաց։ Եւ ի սոցունց հրամանէն եւ ի քանիցն քննեալ ասուպեցին եւ իմացեալ ճարտարութեամբ, ընդ որս եւ մի ի նոցանէ, որ Կոչի Արուսայիդ, զարտիկ լիմն, հռոմ ոմն, ի բազում դրոց ժողովեցաւ զիստակն զայս բանս

1775, 42 123բ-129բ (Ժէ դ.), Թ. 1814, 42 185ա-192բ (Ժէ դ.), Թ. 1816, 42 351ա-368բ (Ժէ դ.), Թ. 2332, 42 172բ-176բ (Ժէ դ.), Թ. 3276, 42 76ա-82ա (Ժէ դ.), Թ. 6017, 42 199ա-209ա (Ժէ դ.), Թ. 1815, 42 202բ-210ա (Ժէ դ.), Թ. 3128, 42 373ա-380բ (Ժէ դ.), Թ. 7015, 42 108ա-118ա (Ժէ դ.)։

66. «Բժշկարան ձիոյ եւ անասարակ գրատանոյ (ԺԳ դար)», աշխատասիրութեամբ Բ. Լ. Չուգասդեանի, Երեւան, 1980։ Հրատարակութիւնն իրագործուել է մի եզակի ձեռագրի հիման վրայ, որ Ժամանակին եղել է Թարգմանութեան եւ Գրական-գրութեան Լ. Աճառեանի կողմից (տե՛ս Լ. ԱճԱՌԵԱՆ, Ցուցակ հայերէն ձեռագրաց Թարգմանի, Իրան, 1910, էջ 137-138), իսկ այժմ գտնուում է Լոս-Անջելոս քաղաքի բնակիչ Ջարեհ Սարգսեանի մօտ։

67. Հմմտ. Ա. ОГАНЕСЯН, История медицины в Армении, с древнейших времен до наших дней, ч. II, Ереван, 1946, с. 53. ԱՌԻՍՍԵՒԻ, Յաղազս կազմութեան մարդոյն (աշխատասիրող Ս. Վարդանեանի ներածութիւնը), էջ 8։ ԻՇՕԻ, Գիրք ի վերայ բնութեան (աշխատասիրող Ս. Վարդանեանի ներածութիւնը), էջ 8։ Բժշկարան միոյ եւ անասարակ գրատանոյ՝ աշխատասիրող Բ. Չուգասդեանի ներածութիւնը), էջ 23-24։

68. Ա. ОГАНЕСЯН, История медицины в Армении, ч. II, с. 58-65, 173-175, 228-232. ԳՐԻԳՈՐԻՍ, Փնտրում բնութեան մարդոյն եւ փոքրիկ ցուց. աշխատասիրութեամբ Ա. Ս. Կծոնեանի, խմբագրութեամբ Լ. Ս. Ուշիկեանի, Երեւան, 1962, էջ XXXV-XXXVI։ С. ВАРДАНЯН, Сирийские врачи в Армении (XI-III вв.), "Арабские страны: история, экономика (сборник статей)", Москва, 1974, с. 29-34. S. VARDANYAN, Ancient Armenian Translations of the Works of Syrian Physicians, «Revue des Etudes Arméniennes», N.S., t. XVI, Paris, 1982, p. 213-219.

համառոտ, ետ մեզ զուգորդեն եւ պկարճն ի պովութիւն եւ ի փառս Աստուծոյ...»⁶⁹: Մասնադէտներն առաջմ չեն կարողացել բաւարար բացատրութիւն տալ լեզուաբանութեան բառերին⁷⁰, որոնց իմաստը անհասկանալի է մնում: Պատահական չէ, որ Արուսայիդի երկի՝ Ասար Սեբաստացու կազմած խմբագրութեան մէջ (ԺԷ. դար) յիշեալ բառերը բաց են թողնուած. «Ընդ որս եւ մի ոմն ի նոցանէ, որ կոչի Արուսայիդ, զոր առեալ ի դրոց բժշկապետացն, յստակ եւ համառոտ ետ մեզ զայս բանքս...»⁷¹:

Բացի «Յաղագս կազմութեան մարդոյն» երկից՝ Արուսայիդի անունը կապուած է նաեւ հայկական ձեռագրերում պահպանուած հետեւեալ փոքրիկ գրութիւններին հետ⁷².

ա. «Տեսումն ներսէսի գտեալ հարցմամբ ի յԱպուստոս իմաստաւիրէն: [Մկ.] Մատթան քահանայի, որ ի ցեղէն Ղեւա, երեք դասերը էին...: [Վերջ] Ահա եղիսարեթ աղագական ըո, եւ նա յղէլ է»⁷³:

բ. [Ամուսնի քաղաքացի]: [Մկ.] Սելեւկոս թագաւոր հետ Աղեքսանդրի շինեաց զՍելեւկիայ ի յիւր անունն...: [Վերջ] Եղեւ սիւայ, յորոյ անունն շինեաց Վեդեսիայ, որ Կ Ուռհայ: Զայսուսիկ տեսան իմոյ ներսէսի կաթողիկոսի սրբոյ, նաեւ տիեզերալոյս վարդապետի եւ փմաստասիրի ընեալ հարցմամբ յԱպուստոսի տէ իմաստասիրէ եւ բժշկէ Ասորոց, որ էր յոյժ հմուտ երկուց պիտութեանց՝ արտաքնոյցն ասեմ եւ զեկեղեցականիս, ասաց ճշմարիտ պատմութեամբ. որոց ողորմեացի տէր Յիսուս Քրիստոս. չք»⁷⁴: Եթէ սոյն յիշատակարանի վերջին չք տառերը թուական համարենք (= 702), ապա Հայոց մեծ թուականութեամբ կը ստանանք 1253 թուականը, որ չի համապատասխանում ներսէս Ծնորհալու ժամանակին: Սակայն ձեռագրի գրութիւնը (Մաշտոցեան Մատենադարան, Թ. 1770) թոյլ է տալիս չք-ն կարգալ նաեւ եր, այսինքն՝ Հայոց փոքր թուականու-

69. ԱՐՈՒՍԱՅԻԴ, Յաղագս կազմութեան մարդոյն, էջ 107:

70. Վ. Թորգոմեան «գարտիկ լիմն» բառերը ուղղում է «գանդիկ լիմն». տե՛ս Վ. Բ. ԹՈՐԳՈՄԵԱՆ, Հայ բժշկական ձեռագիրք, Բ. Մաղադակագութեան Ազուսայիդի, «Հանգէս Ամսօրեայ», 1892, էջ 334: Այդ հիման վրայ Լ. Յովհաննիսեանը նշուած բառերը թարգմանում է «ոմն հերետիկոս» (некий еретик). տե՛ս Լ. ОГАНЕСЯН, История медицины в Армении, ч. II, с. 59, 61.

71. ԱՐՈՒՍԱՅԻԴ, Յաղագս կազմութեան մարդոյն, էջ 170:

72. Այդ լեզուաբանի մասին մասնաձեռն տե՛ս Ն. ԱԿԻՆԵԱՆ, ներսէս կամբարձացի..., էջ 293-296:

73. Հմմտ. ՄՄ. ձեռ. Թ. 1770, էջ 364բ: Հրատ. F. N. FINCK, Kleinere mittel-armenische Texte, «Zeitschrift für armenische Philologie», 1. Bd., 3. Heft, Marburg, 1902, S. 205.

74. Հմմտ. ՄՄ. ձեռ. Թ. 1770, էջ 364բ: Հրատ. F. N. FINCK, Kleinere mittel-armenische Texte, S. 206.

Թեան 72րդ տարին, որ համապատասխանում է 1156 թուականին: Երկատակարանի միև ընդօրինակութիւններում չքի փոխարէն պարզապէս դրուած է ամէն քառը⁷⁵:

Բանասիրութեան մէջ երբեմն այս դրութիւնները թիւրիմացաբար վերագրուել են Ներսէս Լամբրոնացուն⁷⁶, սակայն, ինչպէս պարզել է Ն. Ալիւեան, իրականում նրանք վերաբերում են Ներսէս Շնորհալուն⁷⁷: Ըստ Ն. Ալիւեանի՝ Լամբրոնացին հաւանաբար պատանեկութեան շրջանում ընդօրինակել է այս դրութիւնները եւ իր կողմից աւելացրել վերը քերութեամբ յիշատակարանը⁷⁸: Այսու մէջտեղից դուրս է գալիս բանասիրութեան մէջ տեղ գտած այն թիւրիմացութիւնը, որ Արուսայիդը Շնորհալուց բացի գործակցել է նաեւ Լամբրոնացու հետ⁷⁹:

Արուսայիդի մասին մի աւելի որոշակի եւ բովանդակալից տեղեկութիւն վէ պահպանուել է Միքայէլ Ասորու «Ժամանակագրութեան» ասորական քնադրում, որի վրայ, սակայն, որքան մեղ յայտնի է, հետազոտողները ուշադրութիւն չեն դարձրել. «1449 (= 1138) թուականին, երբ Ոստան ասես քանտարկուած լինէր թուրքերի կողմից, որոնք անընդհատ կողոպուտով էին զբաղուած եւ նրա բնակիչներին թոյլ չէին տալիս հանդիստ ելումուտ անելու, Սամուստում մի մեծ բաղնիքիւն հաւաքուեց՝ այնտեղ անդամութեան հասցընելու համար: Նրանց հետ վին նիզակներով զինուած 300 ֆրանկ ասպետներ, իսկ քոլորը միասին մօտ չորս հազար հոգի էին, որոնց մէջ էր նաեւ քօրչկ եւ փիլիսոփայ Արուսայիդ սարկաւազը: Եւ մինչ նրանք առաջ էին շարժուած, գիշերը թուրքերը յարձակում գործեցին դարանից. դա խուսամէտքէն էր՝ Մարդինի տէրը: Շատերն սպանուեցին, իսկ քոլորը միւսները գերի քշուեցին, այդ թիւում եւ ինքը Բուսայիդը, ինչպէս նաեւ Միքայէլ Բար-Շումմանան իր որդու հետ: Արուսայիդը ասղադիտութեան անմիտ արուեստով անգամ չկարողացաւ կանխատեսել, որ այդ օրը նման բան պիտի պատահէր»⁸⁰:

75. Հմտ. F. N. FINCK, *Kleinere mittelarm. Texte*, S. 206. Ն. ԱԿԻՆԵԱՆ. Ներսէս Լամբրոնացի..., էջ 294:

76. Հմտ. Գ. ԱԼԻՇԱՆ, Սիւսում..., էջ 516: Գ. ԶԱՐԳԶԱՆԱԼԵԱՆ, Հայկական հիմնադրութիւն, Վենետիկ, 1897, էջ 660: Թ. ԱՆԱՍԵԱՆ, Հայկական մատենագիտութիւն, հատ. Ա, էջ 68: ԱԲՈՒՍԱՅԻԴ, Յաղագս կազմութեամ մարդոյմ (աշխատասիրող Ս. Վարդանեանի ներածութիւնը), էջ 7:

77. Ն. ԱԿԻՆԵԱՆ, Ներսէս Լամբրոնացի..., էջ 293-296:

78. Անդ, էջ 295:

79. Տե՛ս Ժանթ. 76:

80. MS, III, p. 246. Սոյն դրութեան կայ նաեւ Անանուս Երեսացու ժամանակագրութեան մէջ, սակայն առանց Միքայէլի նշած մանրամասների եւ Արուսայիդի անուան յիշատակութեան. տե՛ս ANONYMI AUCTORIS chronicon, § 401. ԱՆԱՆՈՒՆ ԵՒՆԱՅԻ, Ժամանակագրութիւն, գլ. 401:

Այստեղից պարզուամ է, որ դեռեւս 1138 թուականին Աբուսա-
յիդը հռչակուած է եղել որպէս բժշկի, փրկիսփայ եւ աստղագէտ:
Գերովթիւնից յետոյ, նա հաւանաբար հաստատուել է Կիլիկիայում,
եւ այստեղ Ներսէս Շնորհալուն որոշ տեղեկութիւններ է հաղորդել
Եղեսիա քաղաքի մասին, որոնց հիման վրայ կազմուել են վերը նըշ-
ուած փոքրիկ գերուածքները: Ուշագրաւ է, որ Միքայէլ Ասորու՝
Աբուսայիդին յատկացրած «բժշկ եւ փրկիսփայ» քնորոշումը բա-
ցարձակապէս համընկնում է «Անուանը քաղաքաց» գերուածքի յիշա-
տակարանի «իմաստասէր եւ բժշկ» արտայայտութեանը: Ուշագրաւ
է նաեւ, որ ինչպէս Միքայէլի մօտ, այնպէս եւ հայկական ձեռա-
գրերում՝ հեղինակի անունը վկայուած է Աբուսայիդ եւ Բուսայիդ
տարբերակներով:

2. Եթէ Աբուսայիդի վերաբերեալ պահպանուել է միայն մէկ
ստորջ թուական, ապա իշոխ բժշկի մասին ունենը միանգամից եր-
կուած: Բար-Հերբէրէոսի «Ասորական ժամանակագրութեան» մէջ պահ-
պանուել է նրան վերաբերող հետեւեալ թանկարժէք տեղեկութիւնը.
«Այդ ժամանակ Մելիտենէում հռչակ էր վայելում Իսա ուռհայեցի
բժշկի, որ Հասանուն բժշկի աշակերտն էր: Նա Մելիտենէից տե-
ղափոխուեց Կիլիկիա եւ ծառայութեան մտաւ Թազաւորի մօտ: Ապա
Սսում մի հոյակապ եկեղեցի կառուցեց սուրբ Մար-Բարսումայի ա-
նունով»⁸¹: Քանի որ Բար-Հերբէրէոսի «Ասորական ժամանակագրու-
թեան» մէջ նախորդ դէպքը թուագրուած է Յունաց 1555 (= 1244),
իսկ յաջորդը՝ 1556 (= 1245) թուականով, ուստի իշոխի մասին տե-
ղեկութիւնը վերաբերում է 1244/5 թուականներին: «Եկեղեցական
ժամանակագրութեան» մէջ Բար-Հերբէրէոսը հաղորդում է, որ երբ
1249 թուականին եգիպտացիներն այրում են Սիսը, իշոխի կառու-
ցած եկեղեցին անմնաս է մնում»⁸²:

Թէեւ Բար-Հերբէրէոսի տուեալները մասամբ յարմին են եղել Ղ.
Ալիշանին⁸³ եւ նրա շնորհիւ մտել գիտական շրջանառութեան մէջ⁸⁴,

81. BAR-HEBRAEI Chronicon Syriacum, ed. P. I. Bruns et G. G. Kirsch, Lipsiae, 1789, p. 505.

82. BH, I, p. 669-670.

83. Ղ. ԱԼԻՇԱՆ, Սիսում... և 221 (եէր [ի Սիս] եւ Ասորուց աթոռ հարթապե-
տական, զոր հաստատեաց բարեկամն Հեթմոյ Ս.՝ Իգնատիոս, շինեալ անդ
կաթողիկոսարան յամի 1244. յոր յաւել ան մեծ բժիշկն Եղեսացի Իսա՝ զեկե-
ղեցին յանուն Պարամայ): տե՛ս նաեւ էջ 554: Լ. Յովհաննիսեան Նոյնպէս
ինչո՞ր աղբիւրի միջոցով ծանօթ է Բար-Հերբէրէոսի տեղեկութեանը, բայց ան-
ձամբ այն չի ստուգել: Ա. ОГАНЕСЯН, История медицины в Армении
т. II с. 174.

84. Հմմտ. ԻՇՕԽ, Գիբք փ վերայ բնութեամ (աշխատասիրող Ս. Վարդանեանի նե-
րածութիւնը), էջ 8:

այնուամենայնիւ դրանց պատշաճ ուշադրութիւն չի յատկացուել: Մեզ ուշադրաւ է թուում մանաւանդ այն փաստը, որ Իշոխը Մելիտենէից Կիլիկիա տեղափոխուելով, ծառայութեան է մտել Հայոց Թագաւորի մօտ: Յայտնի է, որ նշուած ժամանակներում, աւելի ճշգրիտ՝ 1241 թուականին, Զապէլ Թագուհին Սիս քաղաքում կառուցել էր մի հիւանդանոց, որի շինութեան արձանագրութիւնը վերայում է. « Յարմարումն Շինուածոյ Հիւանդանոցիս / Գրիստոսասէր Թագուհւոյ Զապելի / Ի Թփին Հայոց ՈՂ»⁸⁵: Ռացառուած չէ, որ Իշոխը Մելիտենէից հրաւիրուել է Կիլիկիա՝ այս հիւանդանոցում աշխատելու համար, եւ որպէս արքունի թփշկ արտօնութիւն է ձեռք բերել ասորական եկեղեցի կառուցելու:

Իշոխին վերաբերող յաջորդ ստորդ թուականը վերաբերում է 1248ին, երբ նա վարդան Արեւելոցու աշխատակցութեամբ ասորերէնից հայերէն է թարգմանում Միքայէլ Ասորու «Ժամանակագրութիւնը», սակայն այդ մասին մանրամասն վը խօսուի սոյն աշխատութեան յաջորդ բաժնում:

3. Յարաճ Ասորի թփշկի մասին միակ տեղեկութիւնը տալիս է նրա «Բժշկարան ձիոյ եւ առ հասարակ տրաստնոյ» աշխատութեանը կըցուած բովանդակալից յիշատակարանը, որը տեղախտաբար մեզ է հասել թերի վիճակում. «Փառք, պատիւ եւ երկրպագութիւն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն: Արդ գրեցաւ Բժշկարանս ձիոյ եւ առ հասարակ գըրաստնոյ, որ ճանչենան զարդէկն եւ զպեղծն, հրա[մ]նաւ քրիստոսայսէր արքային հայոց Սմբատայ իմաս[տ]նո[յ] եւ մտախոհի եւ հանճարապաշտին եւ բարեպաշտի, որոյ աջն Գրիստոսի Աստուծոյ միշտ հովանացի նորա փառաց ի փառս բարձրանալ նմայ, երկար կենաւ: Ամէն: Եւ ի հայրապետութեան տեառն Գրիգորիոսի Թարգմանեցաւ գերբս այս ի յարապ գրէ ի հայ բառ, որ է Բժշկարան ձիոյ եւ այլ հասարակ գրաստնոյ, ի բազում իմաստասիրաց եւ Ֆիլոսալֆայից Ճընայ եւ Ալի Ուսուֆին եւ Ընայշիտայ եւ այլ բազում ճընդկաց եւ Պաղտտայ իմաստասիրացն ասացեալ, որոց զանուանքն չենք աստ գրել: Եւ արդ ես նուաստ թփշկս՝ Յարայճս, Կրամանաւ տեառն իմոյ սուրբ արքային յանձն առի բազում աշխատանաւք եւ Թարգմանեցի զսա զորդ եւ յատակ վառիւ, զի յոյժ հմուտ էի եւ վարժեալ յարուեստս բժշկութեան ի մեծն Պաղտատ բազում ամաւք: Եւ եմ աղգաւ եւ հաւատով ասորի, աստուածապաշտութեամբ կատարեալ ուղղափառ: Եւ աշխատեցայ Թարգմանել զբժշկական եւ զիմաստասիր-

85. Ղ. ԱԼԻՇԱՆ, Սիւտամ... էջ 223: Զապէլ Թագուհու հիմնադրած հիւանդանոցի մասին մանրամասն տե՛ս Л. ОГАНЕСЯН, История медицины в Армении, т. II, с. 179-180.

րական գիրքս ի մայրաքաղաքս Սիս: Արդ ես, Թորոս տրուպ քահանայ, տեսեալ զիս Ֆարաճ բժիշկս այս, եւ յոթ աղաչեաց զիս եւ շատ հարկեաց եւ բազում խոստումնս խոստացաւ փնճ եւ բազում երգումնս երգուեալ ինձ կատարեալ ի սուրբ եւ յընտրեալ արքայէն: Եւ ես յորժամ լուայ զփափաքումն սուրբ արքային, վասն սորին, եւ ապա յանձն առի եւ գրեցի ի սաւն եւ ապա վերստին նորոգեցի եւ գրեցի մեծ գիր ի յարապ գրէ ի հայ բառ զորդ եւ յըստաւ...»⁸⁶:

Յիշատակարանը պարզում է հետեւեալ կարեւոր հանգամանքները. Ֆարաճ Ասորին իր «Բժշկարանը» կազմել է Հայոց Սմբատ Գ. Թագաւորի կարճատեւ գահակալութեան տարիներին (1296-1299 թթ.), երբ Հայոց կաթողիկոսն էր Գրիգոր Անաւազդեցին (1293-1307 թթ.). Ֆարաճն իր երկը կազմել է արաբական աղբիւրների հիման վրայ. այնուհետեւ Թորոս անունով մի հայ քահանայ խմբագրել եւ գրի է առել այն: Թերեւս աւելորդ է նշել, որ Իզնատիոս Շփրէմ Ա. Բարձումայի՝ «Ասորական գիտութեան եւ գրականութեան պատմութիւն» արաբերէն գրքում 1299 թուականի տակ յիշատակում է Իսահակ իբն Աբի Աբի ալ-Ֆարաճ իբն ալ-Կասիս անունով մի ասորի բժիշկ⁸⁷:

4. Յայտնի է, որ Կիլիկեան շրջանում, մանաւանդ ԺԳ. դարում, արաբերէնից հայերէն են թարգմանուել նաեւ գիտական-գործնական բնոյթի մի շարք այլ յուշարձաններ, ինչպէս, օրինակ Պերրե վաստակոց»⁸⁸ եւ Պիրը արուեստի քիմիական»⁸⁹ աշխատութիւնները: Վերջինիս յիշատակարանում հետաքրքիր տեղեկութիւններ են պահպանուել նաեւ պոլսոյատաճուլութեանը, ձիազարմանութեանը, թրագործութեանը եւ աստղագիտութեանը նուիրուած գրքերի: Թարգմանութիւնների մասին, որոնք իրականացուել են Հեթում Ա. Թագաւորի օրով (1221-1270 թթ.). «Եւ այս խրատնիս այլ ի հետ պոլսոյատ շինելուն եւ մովս տալուն էր գրած ի նոյն իմաստասիրացն պարսից, զոր թարգմանեց Հեթում Թագաւորն Հայոց, յորժամ գնաց ԺԼԻ (18.000) հեծելով ի վերայ Թշնամոյն սուլտանին եւ կոտորեաց եւ սպառեաց զամենեսին եւ գնաց մեծաւ պատուով ի Պաղատա առ Նոոր խալիֆայն եւ մեծ պարգեւօք յարձաւ: Եւ իմաստասէր ոմն սարկաւազ Ստեփանոս անունս գտեալ առ կայսրն, որ այնչափ ազգ ազգի գիր եւ լեզու ուսեալ՝ նման առաջի փիլիսոփայիցն, եւ ոչ կայր գիր

86. «Բժշկարան ձիոյ եւ աստասարակ գրատետնոյ», էջ 163-164:

87. MAR IGNATIUS APHREM I BARSAUM, *Histoire des Sciences et de la littérature syriaque*, 3^e éd., Bagdad, 1976, p. 163 (en arabe).

88. «Գիրք վաստակոց. Թարգմանութիւն Տախեաց յարաբացի լեզուէ» (աշխատասիրութեամբ Գ. Ալիշանի), Վնեստիկ, 1877, ԺԹ + 203 էջ:

89. Պահպանուել է Փարիզի Ազգային Գրադարանի Թ. 248 ձեռագրում. տե՛ս F. MACLER, *Catalogue des manuscrits arméniens et géorgiens de la Bibliothèque Nationale*, Paris, 1908, p. 130-131.

որ առ նմայ ոչ գտանէր. եւ նա սիրեցեալ եղեւ ի Հայոց Թաղաւորէն վասն հօր զիտութեան եւ խնդրեաց յարքայէն եւ ետ Թարգմանել երեք գիրս վասն ձիոյ պայթարնման եւ վասն թրի շինելոյ եւ վասն արեգական եւ լուսնի արուեստին եւ քերեալ ի հայոց աշխարհ»⁹⁰ :

Նկատի ունենալով Կիլիկիայում արաբական զիտութեան տարածման օրինաչափութիւնը, կարելի է ենթադրել, որ այս յուշարձանների Թարգմանութեան գործում եւս ասորիները որոշ դեր են խաղացել: Այս տեսակէտից չափազանց պերճախօս է Մաչտոցեան Մատենադարանի Թ. 725 ձեռագրում պահպանուած մի փոքրիկ գերուածք, որի խորագրում նշուած է հետեւեալը. «Տարէցոյց, զարքարգմանեալ եմ ասորիքն ի յարապ գրոցն ի հայ գիրս, որ է կարի դերագոյն եւ ստոյգ եւ զեղեցիկ, որ ցուցանէ պամենայն որպիսութիւն տարուն»⁹¹: Ձեռագիրը հնագրական տուեալներով թուագրւում է ԺԴ. դարով, ուստի Թարգմանութիւնը արէտք է կատարուած լինի ԺԴ-ԺԵ. դարերում:

Ամփոփելով ասորի գիտնականների Կիլիկիայում ծաւալած գործունէութեանը վերաբերող տուեալները, կարող ենք արձանագրել, որ նրանք այստեղ կատարել են մշակոյթի փոխանցողների այն շնորհակալ դերը, ի հարկէ ոչ նոյն հակայական ծաւալով ու ընդդէմ դաւաճ, որ իրագործել էին Լ-Ժ. դարերում արաբական խալիֆութում, արաբներին մատուցելով անտիկ գիտութեան ու փիլիսոփայութեան արգասիքները: Մի գէպ, աւելորդ է նշել, որ հայ եւ ասորի գիտնականների համագործակցութիւնը արաբական բռնական գրականութեան Թարգմանութեան քնազաւառում սկսուել եւ շօշափելի արդիւնք էր տուել դեռեւս ԺԱ. դարում Հարաւային Հայաստանի Նփրկներտ (Մայաֆարկին) քաղաքում⁹²: Ուստի Կիլիկիայում ասորի բժիշկների ու բնագէտների իրականացրած մշակութային առաքելութիւնը այդ աւանդոյթի բնական շարունակութիւնն ու զարգացումը արէտք է համարել:

* * *

90. Տե՛ս «Բժշկարան ձիոյ եւ առհասարակ գրաստնոյ» (աշխատասիրող Բ. Չուրապեանի ներածութիւնը), էջ 22: Նոյն յիշատակարանի այլ հրատարակութիւններ. «Բազմավէպ», 1867, էջ 354: Գ. ԶԱՐՊԱՆԱՆԻԱՆ, Մատենադարանի քարտէսային քարտէսագրութեան փնտնանք, Վանսիկ, 1889, էջ 558: Վ. Թ. ԹՈՐ-ԳՈՒՍԵԱՆ, Հայ բժշկական ձեռագիրք Ս. Ղազարու վանքի, «Բազմավէպ», 1924, էջ 387-388:

91. ՄՄ. ձեռ. Թ. 725, էջ 52ա-53ա:

92. Հմմտ. Ա. ОГАНЕСЯН, История медицины в Армении, ч. II, с. 50-56, 70-71.

Հայ մշակույթի դարգացման կիլիկեան շրջանը հոգեւոր կեանքի համակողմանի ծաղկման պայմաններում նշանաւորւում է նաեւ թարգմանական դրականութեան թուռն ծաւալմամբ⁹³։ Ինչպէս կարելի էր նկատել վերը շարադրուածից, այս շրջանը բնորոշւում է յատկապէս դործնական գիտելիքների՝ քաղկութեան, մետաղագործութեան, գիւղատնտեսութեան, ինչպէս նաեւ քաղաքացիական իրաւունքի նկատմամբ եղած հետաքրքրութեամբ, որ քրիստոմ էր Կիլիկեան հայկական պետութեան անմիջական կենսական կարիքները բաւարարելու անհրաժեշտութիւնից։ Սակայն դրա կողքին ժի-ժի-դարերում շարունակւում են նաեւ հայ մատենագրութեան դասական շրջանի թարգմանական աւանդոյթները։ Հայերէնի են վերածւում նորանոր վարքեր, վկայաբանութիւններ, ճառեր, փիլիսոփայական, պատմական բնոյթի աշխատութիւններ, ծիսական գրքեր եւ այլն։

Կիլիկիայում կիրառութիւն է գտնուում թարգմանական գործունէութեան մի նոր եղանակ, որի սկզբնաւորումը կապւում է Գրիգոր Վկայասէլի անուան հետ։ Այն հանգամանքը, որ Կիլիկիայում բնակուող յոյներն ու ասորիները, ժամանակի ընթացքում տիրապետելով հայերէնին, աստիճանաբար ներգրաււում են հայոց մշակութային կեանքի մէջ, հնարաւորութիւն է ստեղծում թարգմանական գործի ծանրութեան մի մասը գնել նրանց ուսերին։ Յոյն եւ ասորի թարգմանիչները սովորաբար կատարում են բնագրերի քառացի թարգմանութիւնները, որոնք այնուհետեւ սրբագրւում եւ յղւում են հայ խմբագիրների կողմից⁹⁴։ Խմբագիրների գերում հիմնականում հանդէս են գալիս ժամանակի հայ հոգեւոր կեանքի խոշորագոյն ներկայացուցիչները՝ Գրիգոր Վկայասէլը, Ներսէս Շնորհալին, Ներսէս Լամբրոնացին, Վարդան Արեւելցին եւ ուրիշներ։

Ասորիքի անմիջական հարեւանութիւնը եւ Կիլիկիայում ասորի բնակչութեան առկայութեան հանգամանքը նպաստում են ասորական գրականութեան քաղմաթիւ յուշարձանների թարգմանութեանը։ Ժի-ժի-դարերում ասորիքէնից հայերէն են թարգմանւում Յակոբ Սրճեցու տասնեակ ճառերն ու ներքողեանները, Դանիէլ Սալախացու

93. Հայ թարգմանական դրականութեան դարգացման կիլիկեան շրջանի մասին մանրամասն տե՛ս Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ, Փոքր հայ հիմն միջնադարեան քաղաքագրական գրականութեան պարբերացում, շէջմիթան, 1982, Դ, էջ 49-50։

94. Հայ եւ օտարազգի թարգմանիչների համագործակցութեան մասին տե՛ս Բ. ԿԻՒԿԻՈՒՄՆԻ, Դիտողութիւն մը հիմնադրութեան քաղաքագրական մասին, Վիեննա, 1931, էջ 369-371։ Ե. ԴՈՒՐԵՆԻ, Ամբողջական նրկեր եղիշէ պատրիարք Դուրեանի, Ա. Պատմութիւն հայ մատենագրութեան, Երուսաղէմ, 1933, էջ 60-66։ H. THOROSSIAN, *Histoire de la littérature arménienne des origines jusqu'à nos jours*, Paris, 1951, p. 130. Ն. ԵՊՈ ՍՈՎԱԿԱՆ (Պապանյան), Օտարազգի հայերէնագէտներ (Ժի-ժի դէ.), Վիեննա, 1968, էջ 446-447։

«Սաղմոսաց մեկնութիւնը», Միքայէլ Ասորու «Ժամանակագրութիւնը» եւ «Յաղագս քահանայական կարգաց» աշխատութիւնը, «Ասորահռոմէական օրինադիրքը», Եփրեմ Ասորու մի շարք ճառերը, Եփրեմ Ասորու եւ Բարսուբա Տղնաւորի սլարքերը, Սարգիս եւ Գէորգ զօրավարների վկայաբանութիւնները եւ այլն: Այս թարգմանութիւնների մի զգալի մասը իրադրծուել է, ահա, վերը նշուած եղանակով՝ ասորի թարգմանիչների եւ հայ խմբագիրների համագործակցութեամբ: Յիշատակարանային տուեալներով նման բնոյթի թարգմանութիւնների շարքն են դասուում հետեւեալ հայերէն բնագրերը.

1. «Մեկնութիւն Սրբոյ Աւետարանի»՝ որ ըստ Յօհաննու: Արարեալ Սրբոյն Յօհաննու Ոսկեբերայոյս վարդապետի: [Սկ.] Ի սկզբանէ էր քանն եւ քանն էր առ Աստուած: Իսկ արդ եթէ ինքն Յօհաննէս էր, որ ընդ մեզ խօսէր եւ անձամբ անձին զանձնէ ընդ մեզ խօսէր, պարտ եւ պատշաճ էր մեզ տնորա զազգատոհմն հարցանել...»⁹⁵:

Թարգմանուել է ԺԲ. դարի սկզբին Գրիգոր Վկայասէրի պատուէրով՝ նախ ասորերէնից Անդրէաս ասորի քահանայի աշխատասիրութեամբ, այնուհետեւ յունարէնից՝ Թէօպիստէ հետտորի ձեռքով: Թարգմանութիւնն ամբողջացուել է խմբագրուել է Վկայասէրի նշանաւոր աշակերտ Ֆիրակոսի կողմից, որը եւ թարգմանութեան հանդամանքների մասին թողել է հետեւեալ բովանդակաւից յիշատակարանը⁹⁶.

«Այլ եւ զանգիւտ հայկազանցս ղլուսաւոր մարգարտիս զպատճառն զերանելի յուսաւորէին մերոյ քիոխանորդ զԳրիգորիս զհոգեւոր հայրն մեր եւ զինամածու՝ յիշեցէք ի Տէր, վասն զի նա եղեւ սկիզբն զսուրբ աւետարանիս մեկնութիւնս զերևոյ ի գիրս յայս ի ձեռն բազում աղաչանաց իմոց զինքն զերանելին: Որ եւ յուեալ ինձ ըստ աստուածասէր եւ պատուիրանասէր հոգւոյ իւրոյ, սկիզբն ետ առնել թարգմանութեան նախ յասորւոյն լեզուէ: Եւ քանզի շաղփաղփ ալատարազ զայ լեզուն ասորի ի մերս հայկազանցս արամեանս ազգ եւ լեզու, ըստ որում վերստին իմ աղաչանս ի ձեռն առեալ վկայասէր ոգւոյն՝ ի յունականէն առնել ղթարգմանութիւն զերահրաշ ճառիցս եւ աստուածաբան քանիցս աստուածաբան աւետարանչիս Եօ-

95. «Մեկնութիւն Սրբոյ Աւետարանի»՝ որ ըստ Յօհաննու», Կ. Պօլիս, 1717, 980 էջ: Մաշտոցեան Մատենադարանում պահուում են մեկնութեան հետեւեալ ամբողջական ընթերցանութիւնները. Թ. 3816, էջ 1ա-358բ (ԺԳ դ.), Թ. 5471, էջ 2ա-513բ (ԺԳ դ.), Թ. 1347, էջ 1գ-422բ (1332 թ.), Թ. 7871, էջ 1ա-253բ (ԺԵ դ.), Թ. 2688, էջ 1ա-183բ (1689 թ.), Թ. 6693, էջ 1ա-382բ (1693 թ.), Թ. 4138, էջ 1բ-301ա (1696 թ.), Թ. 3347, էջ 1ա-640բ (ԺԷ դ.):

96. Թիշատակարանը բերում ենք զգալի կրճատումներով:

Հաննու մեկնութեան ի ձեռն հոմանուն երանելի պատրիարքին Կոստանդնուպոլսի տեղեկակցեցոյց աշխարհալոյս վարդապետի Ոսկերեանն կոչեցելոյ մականունութեամբ, եւ վերագործն առ նա աւարեալ իմ Կիրակոսի զբանս մախթանաց, Վասն զի յարմար զոյ յունականն բարբառ ի մերս ըստ Թարգմանութեան: Արդ ունկնդիր եղեալ ինձ, Թողեալ զԱնդրէաս երէց ասորի զԹարգմանիչ, յընէ ի Միսապոտամի գաւառ, առ յունականն հոռտոր Թջօպիստէ կոչեցեալ, որ էր քարտուղար եւ պիտոյ նօտար փշխանին Առօնն կոչեցելոյ, եւ բազում ծախիւք առատատուր պարգեւօք նմա ետ Թարգմանել զսուրբ գիրս: Եւ արդ նա ի Քրիստոս փոխեալ յերանելի կեանսն՝ բազում ճառք մնացին անթարգման: Յոր ես ձեռն արկեալ՝ նոյնպէս առատաբար ձրիւք զմնացեալսն հոռու աւարտել նմին առն: ... Էր Թիւ ի սկզբանցն արարչութեանց ի մեզ ՅՇԼԶ ամ, իսկ ի կենարար գալլաւ տենէն Քրիստոսի՝ ՌձԺԲ ամ, իսկ ի խորովայն պարսից՝ սկսեալ մերս Թիւ ըստ ամաց՝ ԵձԿԶ, իսկ ըստ աւարտման առաջին շրջանին՝ ԵձԼԲ, նորս սկսեալ շար ամաց՝ ԼԳ ամ»⁹⁷:

2. «Երանելոյն Յակոբա[յ] Սրբոյ Եպիսկոպոսի ասացեալ ի մեծի աւուր խաչելութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ ի յաւագակն որ Երաւիրեցաւ ի դրախտն եւ ի սերովբին որ պսակ գնամապարես դրախտին Աղեմա[յ]: [ՍԿ.] Անծանաթ ծնունդ ծոցոյ Հաւրքո միածին, զարթոյն զքնարս իմ եւ փարթամացոյ՝ զբանս իմ ի պարգեւաց ըրց...»⁹⁸:

1151 Թուականին ասորերէնից հայերէն է Թարգմանել Սահակ կամ Իսահակ ասորի քահանան, խմբագրել է Ներսէս Շնորհալին: Արդ մասին տեղեկացնում է ձեռագրերից շատերում պահպանուած հետեւեալ փոքրիկ յիշատակարանը.

«Թարգմանեցաւ ճառս յասորոց ի մերս հրամանաւ տեառն Գրիգորիսի կաթողիկոսի Հայոց ի ձեռն քահանայի ումեմն Իսահակ առնուն կոչեցեալ, ասորի յազգէ, անարհեստ գոլով մերոյ դպրուութեանս, չաղիադսի եւ կոկորդախօս լեզուաւ, եւ ստուգեցաւ ի սուրբ

97. «Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին՝ որ ըստ Յօաննու», էջ 962-963, 965:

98. ՄՄ, ձեռ. Թ. 7853, էջ 1121ա-144ա (1366 Թ.): Սրճեցու այս ճառը պարունակում են նաեւ նոյն Մատենադարանի հետեւեալ ձեռագրերը. Թ. 995, էջ 329ա-351ա (1278 Թ.), Թ. 8268, էջ 12ա-35ա (ԺԳ չ.), Թ. 8309, էջ 113բ-173բ (ԺԳ չ.), Թ. 7441, էջ 384ա-392ա (1132 Թ.), Թ. 3771, էջ 429ա-442բ (1353 Թ.), Թ. 8179, էջ 64ա-82ա (ԺԴ չ.), Թ. 1521, էջ 370բ-377ա (1404 Թ.), Թ. 4774, էջ 4ա-8բ, 11բ-115բ (ԺԶ չ.), Թ. 527, էջ 155բ-170բ (1663 Թ.), Թ. 4034, էջ 314ա-325ա (1669-70 Թ.), Թ. 641, էջ 275բ-291բ (ԺԵ չ.), Թ. 1913, էջ 385բ-395ա (1714 Թ.), Թ. 843, էջ 65ա-98բ (1714-6 Թ.), Թ. 7489, էջ 136բ-144 (1725-9 Թ.), Թ. 6433, էջ 207ա-217ա (1728-9 Թ.), Թ. 3307, էջ 31ա-43բ (ԺԸ չ.), Թ. 2786, էջ 81բ-89բ (ԺԹ չ.):

եւ յանբիծ եւ ի մեծ արհեստակցական փ տեառն Ներսիսէ Հռետոր իմաստասիրէ»⁹⁹ :

Այս յիշատակարանից դեռեւս չի երեւում, որ խօսքը վերաբերում է Գրիգոր Գ. կաթողիկոսին (1113–1166 թթ.) ու Ներսէս Շնորհալուն, եւ ոչ թէ Գրիգոր Դ. կաթողիկոսին (1173–1193 թթ.) ու Ներսէս Լամբրոնացուն : Աւելի որոշակի է Մաշտոցեան Մատենադարանի թ. 1521 ձեռագրի տեղեկութիւնը, որի համաձայն թարգմանութիւնը սրբադրել է կաթողիկոսի եղբայրը, այսինքն՝ Ներսէս Շնորհալին. «... եւ ստուգապէս սրբադրեցաւ ի մեծ եւ յարհեստակցական եւ ի Հռետոր իմաստասիրէ ի տէր Ներսիսէ յեղբարւէն կաթողիկոսի»¹⁰⁰ : Իսկ թարգմանութեան թուականը պարզւում է նոյն Մատենադարանի թ. 641 ձեռագրի շնորհիւ. «Հրամանաւ տեառն իմոյ Գրիգորիս կաթողիկոսի թարգմանեցաւ ճառս ասորոց ի հայս թվիս վեցհարուր (= 1151 թ.)»¹⁰¹ :

Ղ. Փիղղալեմեանի «Յիշատակարանը կամ նշխարք պատմութեան հայոց» ակնարկութեան մէջ քերուած է Յակոբ Սրճեցու նոյն ճառի թարգմանութեանը վերաբերող մի այլ յիշատակարան, որ թուագրւում է, սակայն, Ներսէս Լամբրոնացուն պատշաճող ժամանակով. «ՈՒ (1181). Սուրբ Յակոբ Սրճոյ եպիսկոպոսի խաչի ճառի թարգմանչի բանս. Հրամանաւ տեառն իմոյ Գրիգորի կաթողիկոսի Հայոց թարգմանեցաւ ճառս յասորոց ի հայս. ի թուին ՈՒ. բանի եւ բառի ի Ներսիսէ եպիսկոպոսէ [Լամբրոնացին է. ի լղու աւանի եկեղեցին]»¹⁰² : Այս յիշատակարանը, բնականաբար, որոշ կասկած է առաջանում խնդրոյ առարկայ ճառի թարգմանութեան մեր ընդունած թուականի ճշտութեան նկատմամբ : Ուստի հարցին վերջնական պատասխան տալու համար անհրաժեշտ են լրացուցիչ տուեալներ :

3. «Վկայաբանութիւն սրբոյն Սարգսի զօրավարի եւ որդւոյ նորա որոյ անուն կոչի Մարտիրոս : [ՍԼ.] Ժ ժամանակս թագաւորութեանն Հոռոմայեցոց մեծին Կոստանդիանոսի՝ որ ըստ բնաւորական բարեսէր կամացն...»¹⁰³ :

99. ՄՄ. ձեռ. թ. 4034, էջ 325ա :

100. ՄՄ, ձեռ. թ. 1521, էջ 377ա :

101. ՄՄ, ձեռ. թ. 641, էջ 291բ :

102. ՄՄ. ձեռ. թ. 6273, էջ 325ա :

103. «Մոփեթը հայկականք. ԺԶ», Վենետիկ, 1854, էջ 11–53 : Այլ տպ. «Վարք եւ վկայաբանութիւնը սրբոց», հատ. Բ, Վենետիկ, 1874, էջ 272–299 : Մաշտոցեան Մատենադարանում պահւում են վկայաբանութիւնը պարունակող հետեւեալ ձեռագրերը. թ. 1890, էջ 213բ–234բ, (1172 թ.), թ. 1522, էջ 297բ–305ա (ԺԲ չ.), թ. 3782, էջ 40ա–42բ, 36ա–36բ, 43ա–44բ (ԺԲ չ.), թ. 7729, էջ 141բ–146բ, 138բ–140բ՝ այլ խմբագրութիւն (1200–2 թ.), թ. 3779, էջ 22բ–30բ (1227 թ.), թ. 6196, էջ 499ա–506բ (1227 թ.), թ. 1525, էջ 143ա–

Թարգմանուել է 1158 թուականին Միխայել ասորի քահանայի կողմից եւ խմբագրուել կրկին Ներսէս Շնորհաբու ձեռքով: Թարգմանութեան յիշատակարանն արդ մասին հաղորդում է հետեւեալը.

«Թարգմանեցաւ ճառս յասորւոյն ի մերս ի ձեռն Միխայելի ուրումն կրօնաւորի քահանայի ասորւոյ, եւ յարմարեցաւ ըստ կարի մերում յեզուի շարադրութեամբ ի Ներսիսէ եպիսկոպոսէ յեղբօրէ կաթողիկոսի Հայոց Գրիգորիսի, ի թուաբերութեանս Հայոց ՈՒ. եւ մաղթեմք զընթերցողսդ եւ զդադարողսդ յիշել զաշխատեալս ի սմա աղօթիւք առաջի Աստուծոյ յաւուր տօնի երանելոյն. եւ զքանսդ յիշատակի զբել յիւրաքանչիւր գրեալսդ հայցեմք. ամէն»¹⁰⁴:

Թարգմանութեան հանգամանքների եւ մանաւանդ շարժառիթի մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ է տալիս Ներսէս Շնորհաբու հետեւեալ խորագիրը կրող գրութիւնը, որ սովորաբար ձեռագրերում ընդօրինակում է թուն վկայաբանութիւնից՝ առաջ. «Թուղթ առ ի Ներսիսէ եպիսկոպոսէ յեղբօրէ տեառն Գրիգորիսի կաթողիկոսի Հայոց պատախանի թղթոյն Գէորգեայ Արեւելեան եպիսկոպոսի առաջնորդի սրբոյ ուխտին Հաղբատի յաղագս հետադոտելոյ առ ի ստուգութիւն զպատմութիւնս երանելոյ նահատակին Սարգսի»¹⁰⁵: Թուղթը մեզ է ներկայացնում թարգմանական գործում հայ եւ ասորի հեղինակների համագործակցութեան մի չափազանց ուշադրաւ դրուող, ուստի հարկ ենք համարում նրանից քաղուածաբար մէջբերել հետեւեալ խօսումն հատուածները.

«Քանզի հոգեւորական այս խնդիր բարեյաղթ վկային Բրիստոսի

152բ (ժԳ Դ.), Թ. 2601, էջ 37բ-42ա (ժԳ Դ.), Թ. 2784, էջ 58բ-78բ (ժԳ Դ.), Թ. 5349, էջ 259ա-277ա (ժԳ Դ.), Թ. 7441, էջ 46բ-54ա (1322 թ.), Թ. 7443, էջ 45բ-52բ (1352-3 թ.), Թ. 3771, էջ 76ա-90բ (1353 թ.), Թ. 7853, էջ 308ա-328բ (1366 թ.), Թ. 1523, էջ 217բ-226ա (ժԳ Դ.), Թ. 3787, էջ 141բ-150ա (ժԳ Դ.), Թ. 3797, էջ 132ա-140ա (ժԳ Դ.), Թ. 4676, էջ 236ա-246բ (ժԳ Դ.), Թ. 4709, էջ 200ա-209բ (ժԳ Դ.), 1524, էջ 241ա-251բ (1401 թ.), Թ. 4670, էջ 232բ-240ա (1401 թ.) Թ. 1521, էջ 99բ-104բ (1404 թ.), Թ. 639, էջ 371ա-389ա (1409 թ.), Թ. 994, էջ 136ա-147ա (1409 թ.), Թ. 4517, էջ 623ա-630ա (1438 թ.), Թ. 996, էջ 209բ-221բ (1442 թ.), Թ. 993, էջ 197ա-202ա (1456 թ.), Թ. 4869, էջ 301բ-310ա (1482 թ.), Թ. 4822, էջ 180ա-188ա (1491 թ.), Թ. 933, էջ 267բ-275բ (ժԵ Դ.), Թ. 2782, էջ 179բ-186բ (ժԵ Դ.), Թ. 3772, էջ 176բ-188բ (ժԵ Դ.), Թ. 3791, էջ 174ա-182բ (ժԵ Դ.), Թ. 4677, էջ 90ա-97ա (ժԵ Դ.), Թ. 4803, էջ 68բ-72ա (ժԵ Դ.), Թ. 4802, էջ 210ա-219ա (ժԵ Դ.), Թ. 4929, էջ 176բ-189ա (ժԵ Դ.), Թ. 4950, էջ 137բ-144բ (ժԵ Դ.), Թ. 4716, էջ 40բ-47ա (1581 թ.), Թ. 4774, էջ 155ա-160բ (ժԶ Դ.), Թ. 4789, էջ 240բ-246բ (ժԶ Դ.), Թ. 9063, էջ 165ա-175բ (1623 թ.), Թ. 992, էջ 280ա-284բ (1651 թ.), Թ. 991, էջ 270բ-286ա (1721 թ.): Ծանկում հաշուի ջնն առնուած վկայաբանութեան յայտաւորքային խմբագրութիւնները:

104. «Սոփերք հայկականք. ԺԶ», էջ 53:

105. Ամ, էջ 5-9:

սրբոյն Սարգսի, անճառ պատմութեանն քննութիւնն առ ի զիւստ ճշմարտութեան, որ ի նախնեացն Հարց անտես եղեալ մինչեւ ցմեզ, ի քէն միայնոյ շարժեցաւ զմերս զարթոցանել թմբարութիւն ի գիւտ այնր խնդրոյ: Վասն որոյ եւ մեք ըստ նշանակութեանն առ ի ձէնջ տուեցելոց զորով, զոր եւ ծանուցաւ ձեզ երբեմն յաղօթական եղբօրն զրուցատրութենէ, առաքեցաք ճգնաւորին Մօր Պարսամոյի, առ սահմանաւն Մելիտինոյ Հայոց. որպէս զի յարկեղս մատենից իւրեանց հետազօտեալ քննեսցեն, եւ եթէ տոցի նշանակեալն, թարգմանեալ տայցեն մեզ զխնդրոյ փոյթ, պատասխանեցին մերոցն զայս ինչ, եթէ վասն զի առ մեզ համանման վկայք՝ չորք են կոչեցեալք // Սարգիս, ընկերն Բազոսի՝ որ յիւծածափ նահատակեալ. եւ այլ ոմն որ յԱմիթ, եւ մեւս եւս ի Տարայ՝ ուր հնոցն է երից մանկանցն, եւ զօրավարն Սարգիս հանդերձ որդւովն ի Պարս վկայեալ. արդ զորո՞յ արդեւք ի չորեքունց յայցացանէ խնդրէք ստուգել զպատմութիւն: Եւ մեզ թէպէտ եւ ալլքն քայց յընկերէն Բազոսի անծանօթ էին, սակայն իբրեւ մըտօք ինչ տեսանելով, եթէ զոր խնդրեմքն՝ ոչ այլ ոք ՚ի սոցունց, բայց զօրավարն անուն՝ որոյ եւ որդին. վասն որոյ գրեալ առ նոսա կրկին անգամ, զնորայն յանուանէ խնդրեցաք թարգմանել զվկայութիւն: Եւ նոցա ընկալեալ գառ ի մէնջն ցուցեալ անուն, եւ թարգմանեալ՝ որքան էր կարողութիւն, ջերմեռանդն սիրով ի ձեռն որումն իմաստնոյ ի նոցանէ Միքայէլ անուն, աղօտաբար զմեր գիտողի դըպրութիւն՝ առաքեցին առ մեզ. որ թէպէտ եւ ի յարմարութիւնս բանից եւ ի շողկապս բառից ոչ զուգիւր ըստ մերումս ընդունոյ, // սակայն զքնութիւն քանին եւ զկարգ պատմութեանն ամբողջ ունէր յինքեան: Զոր եւ մեր ընկալեալ, եւ ըստ չափոյ զօրութեան յղկեալ զդուրս բանիցն եւ զպատմողականն՝ առաքեցաք ձեզ եւ հանուրց եկեղեցեաց Հայաստանեաց՝ պանծ երկնային եւ հոգեւոր, որ ծածկեալ էր յայլալեզու ազարակի ազանց. եւ աթմ յայտնեցաւ շնորհօքն Քրիստոսի ի ձեռն քոյին խնդրոյ պատուականդ ի գլուխս եկեղեցւոյ Գէորգէոս: Զոր եւ քո առեալ սերմանեսցես որպէս զբանն սերմանող բանին ընդ ամենայն տեղիս, որք կարդան զանուն տեսուն, եւ կատարեն հանդիսաւոր տօնախմբութեամբ զյիշատակ սրբոյ վկային: // ... Նա եւ որք հակառակաբարն լբերին Յոյնք եւ Վիրք ընդ վկայիս Աստուծոյ, եւ ընդ մեզ առասպելականս իմն յօդեալ վասն սորին բաջադանս, ի ստուգելն զիրին ճշմարտութիւն, թէ ո՞վ արդեւք սա իցէ, զղջացին, կամ ըմբերանեսցին»¹⁰⁶:

4. «Օրէնք յաղքող քաղաքացմ Կոստանդիանոսի, Թեոդոսի եւ Լեւոնի: [Սկ.] Օրէնս բարի եւ ճշմարիտ ետ տէր Աստուած ի սկզբ-

բանէ մարդոյն, որպէս յառաջին գիրս արարածոց եցոյց մեղ օրէնս եւ գրեաց Մովսէս...»¹⁰⁷ :

Օրէնքների սոյն ժողովածուն, որ բանասիրութեան մէջ յայտնի է «Ասորա-Հռոմէական օրինագիրք» կամ «Ասորական դատաստանագիրք» անունով, 1173 թուականին թարգմանել է Ներսէս Լամբրոնացին՝ Թէոդոս ասորի քահանայի օգնութեամբ¹⁰⁸ :

Թարգմանչի յիշատակարանը. «Յամա քահանայապետութեան Հայոց Գրիգորի, որ երրորդ էր նախնեաց իւրոց ի Հռոմկլայն, յաջորդ աթոռոյն, ի Թուին ՈՒՌ, ի ԺԼ ամի նորին հայրապետութեան, խնդիր եղեւ առ նոյն սրբազանն՝ ի քաղաքաց եւ ի պաւտոաց բնակչաց՝ Քաղաքական աւրիկացն: ... Իսկ Քաղաքի Աւրէնս ոչ պտաւ ի մէջ Հայոց, ո՛չ յնկեղեցիս եւ ո՛չ առ իշխանս: Եւ կարի վշտացեալ հայրապետն՝ խնդիր առնէր առ ալլ ազգս. եւ պատահալ անդ յԱսորւոց Թէոդոս անուն իրիթ յիմաստութեան քահանայ, յայտնեաց Տեառնս զի պոյր առ ինքն այս Համառաւս քաղաքական Արինադրութիւնս: Եւ Հրաման տուեալ ինձ տառապեալ իւր ձեռնասուն որդւոյ

107. «Ասորական դատաստանագիրք. ձեռագրերի համեմատութեամբ լույս ընծայեց Արաէն վարդ. Ղլտմեանց», էջմիածին, 1917, ԺԵ + 56: Այլ տպագրութիւններ. K. G. BRUNS u. E. SACHAU, Syrisch-römisches Rechtsbuch aus dem fünften Jahrhundert, Leipzig, 1880 (Neudruck, 1961), S. 95-141; Կ. Թ. ԲԱՍՄԱՋԵԱՆ, Քաղաքային օրէնք Ներսիսի Լամբրոնացոյ ըստ Կոստանդնուպոլի, Թէոդոսի եւ Լեւոնի քաղաքաց Հռովմայեցոց, Փարիզ, 1907, էջ 9-41: Սոյն դատաստանագիրքը տեղ է գտել Մալաոոցեան Մատենադարանի հետեւեալ ձեռագրերում. Թ. 488, էջ 86ա-103ա (1295 թ.), Թ. 556, էջ 74ա-82ա, 87ա-142ա (ԺԳ չ.), Թ. 2593, էջ 180ա-219բ (1303 թ.), Թ. 6398, էջ 38ա-47բ (1303 թ.), Թ. 2776, էջ 177ա-218բ (1335 թ.), 485, էջ 183բ-228բ (ԺԴ չ.), Թ. 8926, էջ 310ա-330բ (ԺԵ չ.), Թ. 3562, էջ 12ա-46ա (1507-9 թ.), Թ. 487, էջ 4ա-5բ. Թերի (1618 թ.), Թ. 795, էջ 313բ-334ա (1618 թ.), Թ. 778, էջ 294ա-324ա (1635 թ.), Թ. 2635, էջ 218բ-234ա (1635 թ.), Թ. 6496, էջ 357ա-382ա (1637 թ.), Թ. 10311, էջ 364ա-391բ (1637 թ.), Թ. 7580, էջ 27ա-52ա (1651 թ.), Թ. 3291, էջ 124բ-156ա (1652-4 թ.), Թ. 8938, էջ 414բ-442բ (1685 թ.), Թ. 209, էջ 18ա-39բ (ԺԶ չ.), Թ. 2655, էջ 270ա-289բ (ԺԷ չ.), Թ. 2750, էջ 1գ-29ա (ԺԸ չ.), Թ. 6890, էջ 168բ-31բ (ԺԹ չ.), 9513, էջ 417բ-447ա (ԺԹ չ.), Թ. 3497, էջ 178ա-197ա (1778 թ.), Թ. 2880, էջ 13բ-33ա (1784 թ.), Թ. 2885, էջ 36ա-40բ. Թերի (1790, 1809-10 թ.), Թ. 3788, էջ 320-345 (1825 թ.), Թ. 3059, էջ 110ա-138ա (1843 թ.), Թ. 8245, էջ 68ա-78ա (1847 թ.), Թ. 2886, էջ 1բ-27ա (ԺԹ չ.), Թ. 8103, էջ 19բ-33ա (ԺԹ չ.): Դատաստանագրերի ձեռագրերի ցանկը կաղաքացիական մեծապէս օգտուել ենք Յ. Անասեանի մատենագիտութիւնից. տե՛ս Թ. ԱՆԱՍԵԱՆ, Հայկական մատենագիտութիւն, հատ. Բ, Երեւան, 1976, էջ 197-198:

108. Թարգմանութեան ձեռնգրամեքների մասին մանրամասն տե՛ս Ն. ԱԿԻՆԵԱՆ, Ներսէս Լամբրոնացի..., էջ 244-256: Դատաստանագրերի հայերէն թարգմանութեանը վերաբերող աղբիւրների և զրականութեան լիակատար մատենագիտութիւնը տե՛ս Թ. ԱՆԱՍԵԱՆ, Հայկական մատենագիտութիւն, հատ. Բ, էջ 194-218:

Ներսիսի, յեղաշրջեցաւ ի հայս, նմին յիշատակ քարի եւ զկնի եկեղեցի ուղղութիւն ընթացից»¹⁰⁹ :

ՈՒԹԲ Թուականը Ն. Ալիւնեանը առաջարկում է կարդալ ՈւԹԲ, իսկ «ի ԺԼ ամի» ընթերցուածը՝ կամ «յԱ ամի» եւ կամ «յԺԼ աւուր», այն է՝ 27 Սեպտ. 1173 թ.¹¹⁰ : Ուղղումը մեզ տեղին է թւում, եթէ նկատի ունենանք, որ Օրինագրեցի փոխառութիւններ կան Մխիթար Գոշի «Դատաստանագրքում»՝ գրուած 1184 թուականին¹¹¹ : Ինչ վերաբերում է Թէոդոս ասորի քահանայի անձնաւորութեանը, ապա նրա անունն ապի, Ն. Ալիւնեանի կարծիքով, թաքնուած է Թէոդորոս Բար-Վահրունը¹¹², որը, ինչպէս վերը տեսանք, սերտ յարաբերութիւնների մէջ էր եւ Գրիգոր Տղայ կաթողիկոսի, եւ Ներսէս Լամբրոնացու հետ : Ըստ այդմ Ն. Ալիւնեանը գծում է թարգմանութեան իրականացման հետեւեալ ընթացքը. «Արդ ընդունելով, թէ յիշատակարանիս Թէոդորոսն նոյն է Թէոդորոս Բար Վահրուն քահանայի հետ, եւ ան է, որ տրամադրեց Կաթողիկոսին ասորերէն Օրինագիրքը, դիւրին պիտի ըլլայ ըմբռնել իրաց առած ընթացքը. այսինքն Կաթողիկոսը յանձնարարեց Ներսէսի, որ հոգայ անոր թարգմանութիւնը : Ներսէս եւ Թէոդորոս յծուեցան գործի. Թէոդորոս ասորի քնագիրը ձեռքին թելադրեց օրէնքները հայերէն լեզուով եւ Ներսէս գրի առաւ անսայթաք հայերէնով : Այսպէս «յեղաշրջեցաւ այն ի հայս» : Զ'ըսեր Ներսէս «յեղաշրջեցի», այլ «յեղաշրջեցաւ» աշխատակցութեամբ երկուքի»¹¹³ :

Բանասէրները տարբեր կարծիքներ են յայտնել «Ասորա-Հռոմէական դատաստանագրքի» հայերէն թարգմանութեան նախօրինակի վերաբերեալ : Ըստ Կ. Ֆասմաջեանի՝ այն թարգմանուել է յունական քնագրից, իսկ ըստ Կ. Բրունսի, Վ. Զախաուի եւ Ն. Ալիւնեանի՝ ասորերէնից¹¹⁴ : Հարցի վերջնական պատասխանը կարելի է տալ բնադրերի մանրակրկիտ համեմատութիւնից յետոյ : Պարզ է միայն մի բան, որ Ներսէս Լամբրոնացու վերը բերուած յիշատակարանը,

109. Ն. ԱԿԻՆԵԱՆ, Ներսէս Լամբրոնացի..., էջ 246-247 : Յիշատակարանը քաղուած է Մարաշի վանքի մի ձեռագիր դատաստանագրքից. առաջին անգամ հրատարակուել է Կ. Պօլսի «Հայաստան» շաբաթաթերթում 1847 թուականին. ձեռագրի ճակատագիրն այժմ անյայտ է. տե՛ս Ն. ԱԿԻՆԵԱՆ, Ներսէս Լամբրոնացի..., էջ 247-248 :

110. ԱՍԳ, էջ 250 :

111. ԱՍԳ, էջ 255 :

112. ԱՍԳ, էջ 250-254 :

113. ԱՍԳ, էջ 253-254 :

114. Տե՛ս Կ. ԲԱՍՄԱՋԵԱՆ, Քաղաքային օրէմք..., էջ 5-6 : K. G. BRUNS u. E. SACHAU, Syrisch-römisches..., S. 170-171. Ն. ԱԿԻՆԵԱՆ, Ներսէս Լամբրոնացի..., էջ 255 :

փաստերի ներկայ դրությամբ, կողմնորոշում է դէպի ասորական բնադիրը:

5. «Սրբոյն Յակոբա[յ] Սրնո[յ] Եպիսկոպոսի, ներքողեան ի Սուրբ Առաքեալն Թադէոս եւ ի յԱրգար արքա[յ] Հայոց եւ Ասորոց: [Սկ.] Որդի Աստուծոյ, որ ետուր սրբոց առաքելոցն զբան քարոզութեան...»¹¹⁵:

1246 Թուականին Թարգմանեկ է Շմոն ասորի քահանան՝ Վարդան Արեւելցու պատուէրով եւ, հաւանաբար, նաեւ նրա խմբագրութեամբ: Թարգմանութեան յիշատակարանը վկայում է:

«Թ ՈՂԵ (= 1246) Թւիս Հայոց Թարգմանեցաւ ճառս յասորոց ի ձեռն Շմոնի քահանայի ասորւոյ. հրամանաւ Վարդան Վարդապետի»¹¹⁶:

6. «Սրբոյն Յակոբայ Սրնոյ Եպիսկոպոսի, վասն առաջին խորհրդոյն եւ ի վերա[յ] նախապետացն եւ մարգարէիցն: [Սկ.] ի Ժողխորհրդոց քոց ահա իշանեմ ի վաճառ, Որդի Աստուծոյ...»¹¹⁷:

Թարգմանուել է հաւանաբար նոյն 1246 Թուականին յիշեալ Շմոն ասորու եւ Վարդան Արեւելցու աշխատակցութեամբ: Թարգմանութեանը կցուած փոքրիկ յիշատակագրութեան մէջ նշուած է միայն հետեւեալը.

«Ձայս ճառը ներքողենից Սրբոյն Յակոբայ եւ այլ յորով բանք Թարգմանեաց Վարդապետն Վարդան»¹¹⁸: Պարզ է, որ այստեղ նկատի է առնուած նաեւ Յակոբ Սրճեցու նախորդ ճառը:

Ինչպէս ասորեւ կը տեսնենք, ասորերէնից կատարուած այլ Թարգմանութիւնների յիշագրում Վարդան Արեւելցու աշխատակիցն է եղել Իշոխ (= Յեսու) անունով ասորի քահանան, որ հիմք է տուել Շմոն ասորուն նոյնացնելու նրա հետ¹¹⁹: Սակայն, մեր կարծիքով,

115. Երուսաղէմի Ս. Յակոբեանց Մատենադարանի ձեռ. Թ. 1365, էջ 83բ-131ա. տե՛ս Ն. ԵՊՍ. ՊՈՂԱՐԵԱՆ, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հատ. 4, Երուսաղէմ, 1969, էջ 644:

116. Ն. ԵՊՍ. ՊՈՂԱՐԵԱՆ, Մայր ցուցակ, հատ. 4, էջ 644:

117. Երուսաղէմի Ս. Յակոբեանց Մատենադարանի ձեռ. Թ. 1365, էջ 131բ-157ա. տե՛ս Ն. ԵՊՍ. ՊՈՂԱՐԵԱՆ, Մայր ցուցակ, հատ. 4, էջ 644: Սրճեցու այս ճառը պահպանուել է նաեւ Մաշտոցեան Մատենադարանի հետեւեալ ձեռագրերում. Թ. 7489, էջ 364բ-369ա (1725-9 թ.), Թ. 600, էջ 164բ-168ա (ԺԸ դ., քաղ-ուածք), Թ. 2786, էջ 125ա-129բ (ԺԹ դ.): Նաեւ՝ Վենետիկի Միխիթարեան մատենադարան, ձեռ. Թ. 244, էջ 9ա-25ա (ԺԴ-ԺԵ դ.). տե՛ս Բ. ՍԱՐԳԻՍ-ԵԱՆ, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Միխիթարեանց ի Վենետիկ, հատ. Բ, Վենետիկ, 1924, էջ 637-638:

118. Ն. ԵՊՍ. ՊՈՂԱՐԵԱՆ, Մայր ցուցակ, հատ. 4, էջ 644:

119. Տե՛ս «Ժամանակագրութիւն տեսնոն Միխայէլի Ասորւոց պատրիարքի», Երուսաղէմ, 1871, Յառաջաբան, էջ ԺԲ:

անունների տարբերությունը թող չի տալիս այսպիսի նոյնացման համար, մանաւանդ որ Բար-Հեբրէոսի «Եկեղեցական ժամանակագրութեան» մէջ յիշուած է ԺԳ. Վարի կէսերին Հոռմկլայում գործած Շմոն (= Շմաւոն, Սիմէոն) անունով մի ասորի բժիշկ-բահանայ¹²⁰ :

7. «Տնտն Միխայելի պատրիարքի Ասորոց Համառօտ ժամանակաց գրոյցք քաղաւածու արարեալ յայովից պատմագրաց ի վարժս բանասիրաց սղամանակ տեղեկութիւն յԱղամայ հետէ մինչեւ յետին աւուրս քննացեալ: [ՍԿ.] Գլուխ Ա. Յաղագս Աղամայ հետէ մինչեւ յԱմազունք: Եւ արդ լուարուք ուսումնասէրք եւ աստուածասէրք կարօտեալք դիւտից եւ ժամանակաց...»¹²¹ :

1248 Թուականին Կոստանդին Ա. կաթողիկոսի պատուէրով Թարգմանել է իշուխ (= Յեսու) ասորի բժիշկ-բահանան, սրբադրել է Վարդան Արեւելցի վարդապետը: Օրինակը, որ ըստ Ժ.-Բ. Շարոյի՝ եղել է Միքայէլ Ասորու ինքնագիրը¹²², տրամադրել է Յակոբիկեան եկեղեցու առաջնորդ Իգնատիոս Բ. պատրիարքը: Այս փաստերը հաւաստուած են Վարդան Արեւելցու կողմից Թարգմանութեանը կցուած ընդարձակ յիշատակարանում, որից եւ կատարուած ենք հետեւեալ քաղուածքները.

«Եւ յաւել (Կոստանդին) եւ ի յայլ քարիսն եւ զայս մատեան ի զանձս Եկեղեցւոյ. Եւ իստ քաղձանօք Թարգմանել զսա յասորոց ի հայս, պիտանի լեալ եւ շահավէտ քուրաստան, լայն եւ երկար իմաստիւք լցեալ, եւ կարճառօտ քանիւք բովանդակեալ, որ ի սուղ ժամանակս կարող է զպատահալսն ի վերայ կացուցանել հին եւ նոր դիպուածոց: ... // Արդ ի յամի ութերորդի քառասներորդի եր-

120. BH, I, p. 735, 741, 747, 759-767.

121. «Տնտն Միխայէլի պատրիարքի Ասորոց ժամանակագրութիւն», Երուսաղէմ, 1870: Այլ խմբագրութիւն. «Ժամանակագրութիւն տեառն Միխայէլի Ասորոց պատրիարքի», Երուսաղէմ, 1871: Մաշտոցեան Մատենադարանում պահուած են Միքայէլ Ասորու «Ժամանակագրութեան» հետեւեալ ամբողջական ընդօրինակութիւնները. Թ. 5904, էջ 1ա-353ա (ԺԳ զ.), Թ. 610, էջ 6ա-57ա. Թերի (ԺԴ զ.), Թ. 1898, էջ 176ա-217բ. Թերի (ԺԴ զ.), Թ. 8481, էջ 3ա-170ա (ԺԴ զ.), Թ. 2678, էջ 258ա-335ա (1426-76 Բ.), 1868, էջ 3ա-204բ (1585 Բ.), Թ. 1869, էջ 1ա-181ա (1585-9 Բ.), Թ. 1518, էջ 3ա-114բ (1594-1600 Բ.), Թ. 1870, էջ 2ա-256բ (1602-8 Բ.), Թ. 1867, էջ 3ա-188ա (1622 Բ.), Թ. 1865, էջ 2ա-68բ (1656 Բ.), Թ. 6411, էջ 3ա-298ա (1658 Բ.), Թ. 1484, էջ 3ա-119բ (1661-71 Բ.), Թ. 1482, էջ 378ա-442ա (1678 Բ.), Թ. 1483, էջ 6ա-125ա (1687-8 Բ.), Թ. 1485, էջ 4ա-241բ (ԺԵ զ.), Թ. 1885, էջ 1ա-283բ (ԺԵ զ.), Թ. 3072, էջ 1ա-206ա (ԺԵ զ.), Թ. 10862, էջ 1ա-336ա (ԺԵ զ.), Թ. 6483, էջ 1ա-102բ (1757 Բ.), Թ. 3517, էջ 5ա-223ա (1766-8 Բ.), Թ. 1866, էջ 3բ-221բ (1768 Բ.), Թ. 2901, էջ 3ա-77բ (1769 Բ.), Թ. 1884, էջ 4ա-86ա (ԺԶ զ.), Թ. 2650, էջ 1ա-112ա (ԺԶ զ.), Թ. 3728, էջ 2ա-218ա (1855 Բ.):

122. Տե՛ս MS, I, Introduction, p. L.

կերիւրերորդի հաղարերորդի թուահարութեան անժամանակ որդւոյն Աստուծոյ գալատեանն, եւ ի ՈՂԷ թուականութեանս // Հայոց՝ թարգմանեցաւ գիրքս այս յասորւոց ի հայս ի հայրապետութեան Հայոց Տեառն Կոստանդնույ եւ ի թաղաւորութեան Հայոց Հեթմոյ քրիստոսապսակի...: Եւ էր պատրիարք Ասորւոց ուղղափառապ Մար Իգնատիէ Անտիոքու, որ ղօրինակն շնորհաց, եւ փոխեցաւ ի ձեռն Իշօխայ սրբանեալ քահանայի վարժելոյ ի հանձար // թշկական արհեստի, որոց վարձատու լիցի տէր Յիսուս ք շնորհս իւր: Այլ եւ մեք իսկ տառապեալ ոգի Վարդան վարդապետ, որ ըստ մերում կարի կատարեցաք ի գիրքս յայս, ունիմք հաւատ եւ յոյս ի գթութիւն Աստուծոյ...»¹²³:

8. «Նորիմ տեառն Միխայելի Յաղագս քահանայալան կարգաց, քէ ուստի տառն գսկիգրն: [Սկ.] Սկիգրն քահանայութեան շնորհի է անժամանակն Աստուած, որպէս եւ ամենայն քարեաց...»¹²⁴:

Թարգմանուել է հաւանաբար նոյն ժամանակներում եւ միեւնոյն անձնաւորութիւնների ջանքերով, քանի որ ձեռագրերում համարեա միշտ յաջորդում է Միքայէլի բուն ժամանակագրութեանը եւ նախորդում նրան կցուած ժամանակագրական ցանկերին: Ըստ Ժ.-Բ. Շարոյի՝ «Յաղագս քահանայական կարգաց» գրութեանը, որ յայտնի է միայն Հայերէն քնագրով, չի կարելի Միքայէլի մի ինքնուրոյն երկ համարել, քանի որ քաղուած է «Ժամանակագրութեանը» կըցուած Ա. յաւելուածից»¹²⁵: Սակայն երբ հայերէն քնագիրը համեմատում ենք այդ յաւելուածի հետ, որ ընդամէնը մի քանի սիւնակ բռնող անունների պարզ վթուարկումն է, ապա տօժուարանում ենք համաձայնել Ժ.-Բ. Շարոյի հետ: Բացառուած չէ, որ այդ երկը նոյն ցանկերի պատմողական տարբերակն է, գրութեան փոխ Միքայէլի կողմից:

123. «Տեառն Միխայելի պատրիարքի Ասորւոց ժամանակագրութիւն», 1870, էջ 610-613:

124. Անք, էջ 532-574: Ժամանակագրութեան միւս հրատարակութեան մէջ այս գործը վերագրուած է՝ «Նորին տեառն Միխայելի պատրիարքի Ասորւոց Յաղագս քահանայութեան, թէ ուստի տխտնի եւ ուր կատարի, եւ թէ գինչ է քահանայութիւնն: [Սկ.] Սկիգրն քահանայութեան Աստուած է, անսկզնաբար եւ տիրապէս ունելով զմա եւ ոչ յովեմքէ տեսալ...»: տե՛ս «Ժամանակագրութեան տեառն Միխայելի Ասորւոց պատրիարքի», Նրուաղէմ, 1871, էջ 1-20 (նոր էջակալումով): Հետաքրքիր է, որ ինչպէս «Ժամանակագրութիւնը», այնպէս եւ «Յաղագս քահանայական կարգաց» գրութեանը յայտնի են հայերէն երկու խմբագրութիւններով: «Յաղագս քահանայական կարգաց» երկի եւ «Դաւանութեան» ձեռագրերը չենք նշում, քանի որ նրանք երկուսն էլ օտարաբար ընդգրկուած են լիւսնալ բուն «Ժամանակագրութեան» գոլոր ամբողջական ընդօրինակութիւններում. հմտ. Ժամագրութիւն (121:

125. Տե՛ս MS, I, Introduction, p. XXI-XXII.

9. «Դաւանութիւն Միխայելի պատրիարքի Ասորոց: [Մկ.] Դաւանեմ զնա, սուրբ եւ զուգարատ Երրորդութիւն աներբ եւ անուր, անսկիզբն եւ անլախճան եւ միշտ անկարօտ եւ լերկրեալ, յամենայն կատարեալ բարւոյ իմացեալ...»¹²⁶:

Թարգմանութեան ժամանակի եւ թարգմանիչների անձնաւորութեան մասին կարող ենք ենթադրաբար ասել նոյն լատին: Միքայէլն իր «Դաւանութիւնը» գրել է 1169 թուականին եւ ուղարկել Մանուէլ կայսրին. ասորական լեռագիրը մեզ չի հասել, պահպանուել են միայն յունարէն եւ արաբերէն թարգմանութիւնները¹²⁷: Հայերէն թարգմանութիւնը մասնագէտների կողմից մինչ այժմ ուշադրութեան չի արժանացել¹²⁸:

126. «Տեառն Միխայէլի պատրիարքի Ասորոց ժամանակագրութիւն», Երուսաղէմ, 1870, էջ 574-582: «Ժամանակագրութեան» միւս հաստատակութեան մէջ (Երուսաղէմ, 1871) բացակայում է:

127. Տե՛ս MS, I, Introduction, p. XVII-XVIII; A. BAUMSTARK, *Geschichte...*, S. 300.

128. Մշտոցեան Մատենադարանի Թ. 6686, էջ 275ա-292ա (11582 թ.) ձեռագիրը պարունակում է հակաքղկեդոնական լատին գրոյցների մի շարք հետեւեալ վերնագրով. «Յուհաննու միակեցի տեսողի, աշակերտի Պետրոսի եպիսկոպոսի Վիրիացոյ»՝ եթէ ամաւրէն ևւ ամպարտաւան ժողովն Գաղիէզօնի ի բարկութեան Աստուծոյ եւ ի թողլոյն ի ձեռաց նղեւ, եւ ոչ ի Հոգւոյն Սրբոյ որպէս իրիկայն, Կոստանդնուպուսին եւ Եփեսոսին: Եւ վկայեն այսմ նախատեսութիւնք արդոցն, որ եղեն յառաջ ճան զժողովն եւ որ յետ այնորիկ: [Մկ.] Այս արանդոյ սկիզբն Նեստորիոս նղեւ, զոր պատմեաց մեզ Հայրն մեր եւ Հայրապետն առլորն Պետրոս...»: Բնագրին կցում քիչատակաբանում նշուած է, որ այն թարգմանուած է նոյն վարդան վարդապետի եւ իշխի երէցի աշխատասիրութեամբ. «Թարգմանեցաւ [յ]ասորոց ի մերա լոյս վարդապետին վանդանա աշխատութեամբ, եւ ատորի երեւեցաւ [ուղղելի՛ երիցու] իշաւս անուն բանտուութեամբ» (էջ 291ր): Թւում է, թէ գործ ունենք վարդանի եւ իշխի իրաւորած մի նոր թարգմանութեան հետ: Սակայն այս զրուցաշարը կազմում է Միքայէլ Ասորու «Ժամանակագրութեան» բաղկացուցիչ մասը եւ ամբողջութեամբ անկայ է ինչպէս նրա ասորական լեռագրում, այնպէս եւ Հայերէն թարգմանութեան մէջ (տե՛ս MS, II, p. 69-88 = IV, p. 203-215. «Տեառն Միխայէլի պատրիարքի Ասորոց ժամանակագրութիւն», Երուսաղէմ, 1870, էջ 203-222. «Ժամանակագրութիւն տեսռն Միխայէլի Ասորոց պատրիարքի», Երուսաղէմ, 1871, էջ 176-206): Յովհաննէս Միակեացի զրուցաշարի բուն ասորական լեռագիրը, որից օգտուել է Միքայէլ Ասորին, պահպանուել է Բրիտանական Թանգարանի Syr. Add. 14650 ձեռագրում՝ թուագրուած Մելեկեան 1186 (= ժ. թ. 875) թուականով (նկարագրութիւնը տե՛ս W. WRIGHT, *Catalogue of Syriac Manuscripts in the British Museum*, Part III, London, 1871, p. 1103-1107 (N^o 979): Հարկ ենք համարում արւելցեալ, որ Մշտոցեան Մատենադարանի Թ. 6686 ձեռագրի մասին տեղեկացել ենք բանասէր ֆ. Անթարեսին «Վարդան Արեւելցի» անտիպ աշխատութիւնից, Բացի այս ձեռագրից՝ խնդրոյ առտրիկայ զրուցաշարը առանձին պատահում է նաեւ այլ ձեռագրերում. հմմտ. ՄՄ, ձեռ. Թ. 3578, էջ 284բ-293ա

Նշուած դրական յուշարձաններից բացի Կիլիկեան շրջանից մեզ են հասել նաեւ ասորերէնից կատարուած մի շարք ալլ թարգմանութիւններ, որոնց իրադրոժման հանգամանքների մասին թէեւ նոյնպիսի որոշակի տուեալներ չունենք, սակայն հիմքեր կան ենթադրելու, որ այս դէպքում եւս ասորի թարգմանիչները կարող են ինչ-որ դեր խաղացած լինել: Պորագրերում եւ յիշատակարաններում որպէս այդ թարգմանութիւնների պատուիրատուներ կամ խմբագիրներ յիշուած են Գրիգոր Վկայատէրը, Գրիգոր Փոքր Վկայատէրը եւ Ներսէս Շնորհալին: Եւ քանի որ յայտնի է, որ նրանք անձամբ ասորերէնից թարգմանութիւններ չեն կատարել, ալլ միայն յարգարել եւ խմբագրել են հայերէն քնագրերը, ուստի այս թարգմանութիւնները եւս իրադրոժուել են ալլ անձանց կողմից, պարզ է միայն՝ ասորի¹²⁹ թէ հայ: Այդ տիպի թարգմանութիւնների շարքը պէտք է դասել հետեւեալ յուշարձանները:

10. «Դամիէլի վարդապետի Ասորւոյ Միկնութիւն Սաղմոսաց Դաւթի: [Սկ.] Թուղթ աղաչանաց զոր գրեաց աստուածասէրն Յովհաննէս հայր վանաց երանելոյն Եւսեբի որ ի Բափրեա Պերթայի առ մեծն Դանիէլ քահանայ եւ վարդապետ վասն մեկնութեան սաղմոսաց...»¹²⁹:

Պօսքը վերաբերում է Զ. դարի ասորի մատենագիր Դանիէլ Սալխացու «Սաղմոսաց մեկնութեանը», որի ասորերէն բնագրերը մեզ է հասել թերի վիճակում¹³⁰: Հայերէն թարգմանութեանը կըցուած յիշատակագրութիւններից մէկում նշուած է հետեւեալը. «Արդ որք վայելէք ի լրոյ հոգիատար մեկնութեանս եւ կամ պաղպարէք՝ որք վայելէք ի Բրիտանո Յիսուս զթարգմանող սորա զՏէր Գրիգորիս Վկայատէր, եւ զնորին հարազատ հեղինակ զՏէր Բարսեղ...»¹³¹, որտեղից պարզուում է, որ թարգմանութիւնը կատարել է (իմա՝ պատուիրել է) Գրիգոր Վկայատէրը:

11. «Պատմութիւն վարուց Երանելոյն Եփրեմի Ասորւոց վարդապետի, որ Թարգմանեցաւ յասորւոց ի մերս հրամանաւ Գրիգորիսի

(1402 թ.) Թ. 1712, էջ 216ա-235բ (ԺԵ դ.), Թ. 6649, էջ 274ա-280բ (ԺԵ դ.), Թ. 1764, էջ 279ա-386ա (1651-4 թ.), Թ. 8194, էջ 281ա-305ա (1688 թ.):

129. Սոյն երկը պահպանուել է Զմատի վանքի Թ. 120 ձեռագրում՝ ընդօրինակուած 1289 թուականին: Ձեռագրի ընդարձակ նկարագրութիւնը տե՛ս Մ. ՔԵՇԵՍՆԱՆ, Ցուցակ հայերէմ ձեռագրաց Զմատի վանքի մատենադարանին, Վիեննա, 1904, էջ 239-243: Մեկնութեան մի օրինակ էլ պահուում է Մաշտոցեան Մատենադարանում (Թ. 1179, ԺԵ դ.): Յրանախոցի հարազատ Բ. Ութիէն մեզ յարեց, որ ԺԹ դարի մի ընդօրինակութիւն էլ վերջնէս ձեռք է բերել Սոլեմի վանքի գրադարանը:

130. Հմտ. A. BAUMSTARK, *Geschichte...*, S. 179.

131. Մ. ՔԵՇԵՍՆԱՆ, Ցուցակ..., էջ 242:

վկայասիրի Հայոց կաթողիկոսի ի հիմզհարիւրերորդի յիսներորդի քուակառնութեան մերում: [Սկ.] Եւ արդ յուսացեալ ի զաւրութիւն ողորմութեան միաննի որդւոյն Աստուծոյ մերոյ եւ փրկչին Յիսուսի Բրիստոսի...»¹³²:

Արդ, խորագրի իսկ հաւաստմամբ Եփրեմի վարքը ասորերէնից հայերէն է թարգմանուել 1101 թրականին նոյն Գրիգոր Վկայատէրի պատուէրով: Զեռագրերում խորագրի համապատասխան հատուածը ունի նաեւ այլ ընթերցումներ՝ «զոր թարգմանեալ (sic) հրամայեաց յասորոց ի մերս սրբազան կաթողիկոսն հայոց մեծաց տէր Գրիգորիս Վկայատէր»¹³³ կամ՝ «զոր թարգմանեաց յասորոց ի մեր երջանիկ կաթողիկոսն հայոց Գրիգորիս Վկայատէր»¹³⁴:

12. Եփրեմի Աստուայ «ներքողեամ ասացեալ պատմագրաբար ի սուրբն Յովհաննէս Կարապետն եւ Մկրտիչ Յիսուսի Բրիստոսի եւ ի կախաւումն Հերովդիազայ: [Սկ.] Հրաւիրելով կոչեցաւ լեզու իմ յուրախարար եւ ի կենսաբեր բարիս, եւ փափագեաց միտք իմ բազմել ուսմամբ ի հոգեւոր սեղանս...»¹³⁵:

132. Խորագիրը բերում ենք ըստ վարքի վերակազմուած, քննական բնագրի, որ Ֆրանսիացի հայագետ Բ. Ութիէի հեղինակակցութեամբ պատրաստել ենք հրատարակութեան «Corpus Scriptorum Christianorum Orientalium» մատենաշարի համար: Մեզ յայտնի են Եփրեմի վարքի հայերէն թարգմանութիւնը պարունակող հետեւեալ ձեռագրերը. Վենետիկի Մխիթարեան մատենադարան, Թ. 200, էջ 172ա-184բ (1224 թ.), Թ. ՄՄ. Թ. 3779, էջ 180բ-194բ (1227 թ.), Թ. 6196, էջ 209ա-221բ (1227 թ.), Թ. 787, էջ 167բ-192բ (ԺԳ չ.), Թ. 3787, էջ 108ա-122ա (ԺԴ չ.), Երուսաղէմի Ս. Եստիրեանց դրաղարան, Թ. 74, էջ 547-615 (1318 թ.), Թ. 3152, էջ 1386-1411 (1384 թ.), Թ. 787, էջ 224-238 (ԺԴ չ.), Փարիզի Ազգային գրադարան, cod. arm. 116 (հին՝ 46), էջ 46ա-53բ (ԺԴ չ.), cod. arm. 120 (հին՝ 47), էջ 268ա-280բ (ԺԴ չ.), Վենետիկի Մխիթարեան մատենադարան, Թ. 232, էջ 96ա-111ա (1857 թ.), Ընդօրինակուած է Փարիզի Ազգային գրադարանի Թ. 120 ձեռագրից: Որոշ հատուածներ պատկանում են երկու հնագոյն պատճառիկներում. Վիեննայի Մխիթարեան մատենադարան, Թ. 456 (573), ԻԱ, 4-6 (ԺԲ չ.), ՄՄ, պատճառիկների հաւաքածու, Թ. 1880 (ԺԲ չ.):

133. ՄՄ. Թ. 787:

134. Երուսաղէմի Ս. Եստիրեանց դրաղարան, Թ. 74:

135. «Մըրոյն Եփրեմի մատենագրութիւնք», հատ. 4, Վենետիկ, 1836, էջ 129-142: Եփրեմի այս ճառը պարունակում են Մաշտոցեան Մատենադարանի հետեւեալ ձեռագրերը. Թ. 7729, էջ 505ա-508բ (1200-2 թ.), Թ. 3779, էջ 3ա-7բ (1227 թ.), Թ. 6196, էջ 412բ-416ա (1227 թ.), Թ. 995, էջ 124բ-139ա (1278 թ.), Թ. 4871, էջ 65ա-74բ (ԺԳ չ.), Թ. 7441, էջ 54բ-59ա (1322 թ.), Թ. 7853, էջ 213բ-216ա (1366 թ.), Թ. 1851, էջ 253ա-264ա (ԺԴ չ.), Թ. 3797, էջ 577ա-582ա (ԺԴ չ.), Թ. 4676, էջ 82ա-88ա (ԺԴ չ.), Թ. 8179, էջ 90ա-110ա (ԺԴ չ.), Թ. 1524, էջ 76ա-82ա (1401 թ.), Թ. 4670, էջ 73ա-78բ (1401 թ.), Թ. 1521, էջ 344ա-348ա (1404 թ.), Թ. 994, էջ 58բ-66ա (1409 թ.), Թ. 4517,

Ձեռագրերում յաճախ խորագրերն ունի հետեւեալ յաւելումը՝ «Թարգմանեալ տեսաւն Գրիգորիսի Հայոց կաթողիկոսի»¹³⁶ կամ՝ «Դոր Թարգմանեաց Գրիգոր կաթողիկոս Հայոց»¹³⁷։ Այս սուղ տեղեկութիւնն, ինչպէս տեսնում ենք, չի պարզում, թէ ո՛ր կաթողիկոսին է վերաբերում խօսքը՝ Գրիգոր Վկայասէրի՞ն թէ Գրիգոր Գ. Պահլաւունուն։

13. «Կանոն մեծի Հինգշաբաթուն Ոսկուային ըստ որում ասացն Յիսուս քէ օրինակ մի ետու ձեզ։ Զոր արարեալ է տեսուն Եփրեմի խորին Աստուայ, զոր քարգամեաց սուրբ կաթողիկոսն Հայոց Գրիգորիս վկայասէրն»¹³⁸։

Հայկական «Մաշտոց» ծիսարանի այս կանոնի մասին Բ. Սարգիսեանը գրում է հետեւեալը. «Կանոնիս նոր Թարգմանուած եւ Մաշտոցին մէջ ներմուծուած ըլլալու ակնյայտին ապացոյցն այն է, որ Ա. Մաշտոցին»¹³⁹ Ոսկուայի կանոնն ամենահամառօտ է, եւ գլխովին տարբեր ասիւ է. այսինքն՝ մի մի Սաղմոսէ, Ընթերցուածէ, Աւետարանէ եւ Աղօթքէ կը բաղկանայ, առանց ո՛ր եւ է խրատի։

էջ 335բ-339բ (1438 թ.), Թ. 993, էջ 482բ-484բ (1456 թ.), Թ. 4869, էջ 208ա-213բ (1482 թ.), Թ. 4822, էջ 424ա-430ա (1491 թ.), Թ. 2782, էջ 384բ-390բ (ԺԵ չ.), Թ. 3772, էջ 92բ-100ա (ԺԵ չ.), Թ. 3791, էջ 65բ-71ա (ԺԵ չ.), Թ. 4802, էջ 59ա-64բ (ԺԵ չ.), Թ. 4929, էջ 71բ-77բ (ԺԵ չ.), Թ. 7769, էջ 143ա-150ա (ԺԵ չ.), Թ. 4716, էջ 6բ-12բ (1581 թ.), Թ. 4774, էջ 413բ-419ա (ԺԶ չ.), Թ. 9063, էջ 375ա-381ա (1623 թ.), Թ. 992, էջ 462ա-466ա (1651 թ.), Թ. 497, էջ 500ա-506բ (1671 թ.), Թ. 2251, էջ 32բ-38ա (1694-8 թ.), Թ. 3111, էջ 88ա-98ա (ԺԷ չ.), Թ. 8689, էջ 180ա-184բ (ԺԷ չ.), Թ. 7489, էջ 166բ-171ա (1725-9 թ.), Թ. 3318, էջ 128ա, Թեբի (1802 թ.), Թ. 6088, էջ 202ա-213բ (ԺԸ չ.), Թ. 2786, էջ 59բ-63բ (ԺԹ չ.), Թ. 5408, էջ 45բ-48բ (ԺԹ չ.)։

136. ՄՄ. ձեռ. Թ. 1524, 3791, 4517, 4670, 4802, 4869, 4871, 4929, 6196, 7729։

137. ՄՄ. ձեռ. Թ. 3797։

138. Գ. ԶԱՐԳԻՆԱՆԻԱՆ, Մատենադարան, էջ 461։ Սոյն կանոնը յայտնի է հարկաւոր ընդօրինակութիւններով, որպէս «Մաշտոց» ծիսարանի բաղկացուցիչ մասը. հմտ. ՄՄ, ձեռ. Թ. 966, էջ 119բ-132բ (1304 թ.), Թ. 963, էջ 124բ-139ա (ԺԴ չ.), Թ. 965, էջ 229բ-238ա (1432 թ.), Թ. 959, էջ 124բ-135ա (1458 թ.), Թ. 958, էջ 230բ-237բ (1473 թ.), Թ. 895, էջ 193բ-205բ (1477 թ.), Թ. 955, էջ 77բ-87ա (1487 թ.), Թ. 960, էջ 251բ-263ա (1498 թ.), Թ. 962, էջ 220բ-232բ (1530 թ.), Թ. 956, էջ 90բ-99բ, (1534 թ.), Թ. 887, էջ 194բ-201ա (1553 թ.), Թ. 971, էջ 132ա-145բ (1562 թ.), Թ. 961, էջ 182բ-194ա (1577 թ.), Թ. 897, էջ 91ա-106ա (1597 թ.) եւ այլն։ Այս տուեալները բաղկի ենք Օ. Եգանեանի կազմած «Մաշտոցեան Մատենադարանի հայերէն ձեռագրերի մասը ցուցակի» անտիպ հատորից։ Կանոնն ընդգրկուած է նաեւ «Ճշարաց» ժողովածուներում։

139. Նկատել տւելի վեներելի Միխիթարեան մատենադարանի Թ. 320 երկաթագրի Մաշտոցը (Թ-Ժ չ.)։

Դիտելով, որ կանոնիս Թարգմանիչն Մեծ Վկայասէրն է, կը հետեւի որ ԺԱ. դարուն անցած է այն ի կարգ նորակարգ Մաշտոցին»¹⁴⁰ :

14. «Վարք եւ փաղափալարութիւն երիցս երանեալ ճգնագգեաց վկայ[.]ին Քրիստոսի սրբոյն Պաքսամու միայնակեցի, որ եղել ի Միջագետս Ասորոց յամս ամպարիշտ քաղաւորին Մարկիանոսի, [Սկ.] Ամենայն ժամանակ ընդունելի է ընտրելոց Աստուծոյ, քանզի եւ յամենայն ժամանակի արդարք, որք յերկրի պայծառանան զանազան առաքինութեամբք...»¹⁴¹ :

Գրիգոր Գ. Պաշլաւունի կաթողիկոսի պատուէրով Թարգմանել է ոմն Գրիգոր քահանայ Մելիտենացի: Թարգմանութիւնը սրբադրել է Ներսէս Շնորհալին: Թարգմանութեան յիշատակարանն այդ մասին վկայում է. «... Այս պատմութիւն վարուց երանեալ ճշնաւորին Քրիստոսի նախ գլովով Թարգմանեալ ի հոյակապ եւ հռչակաւոր մայրաքաղաքն Հայոց Մելիտինոյ, հրամանաւ եւ ծախիւք մեծին Գրիգորիսի կաթողիկոսի եւ վկայատիրի, ի ձեռն Գրիգորի ուրում քահանայ[.]ի: Եւ քանզի դեռեւս ըստ Աստուծոց շաղկապի եւ ծամածուռ, անյարմար եւ աշխարհաւրէն քանիցն դոյր, եւ ոչ ըստ միեոին աշին սիղոբաից պայծառ եւ յոգնապաճոյճ բանից, յաղազս որոյ հրաման հասեալ առ իմ նուաստութիւնս, որ ոչ ըստ արժանւոյն կոչեցեալ Ներսէս, ի գերահռչակ եւ ի սխեմական տեառնէ իմէ է եւ յերբաւրէ Գրիգորիսէ, գլովով նախնոյն մերոյ լուսաւորչի արեան աթոռակալի անուանակիր, որպէս զի ձեռն արկեալ ի սմա, վերստին փոխարկեցից ըստ մերոյ[.]ին լեզուի յարմարութեան ըստ պրեցեկումն լնուլ զպակասութիւն հարց» որդուց: Եւ արդ իմ առեալ եւ առասելեալ ըստ այլայլութեան բանի եւ կնտի, մինչ գրի, գլով ի սմա այժմ ի նոցուն

140. Բ. ՍԱՐԳԻՍԵԱՆ եւ Գ. ՍԱՐԳՍԵԱՆ, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատնադարանին Միտիքաքեանց ի վեմետիկ, հատ. Գ. Մաշտոց-Գրիգոր ձեռնագրու-թեանց, Վենետիկ, 1966, էջ 84-85:

141. ՄՄ, ձեռ. Թ. 1522, էջ 465բ-482բ: Տե՛ս նաեւ նոյն մատենադարանի ձեռ. Թ. 3777, էջ 439ա-454բ (1185-8 թ.), Թ. 3779, էջ 376բ-393ա (1227 թ.), Թ. 6196, էջ 105բ-120ա (1227 թ.), Թ. 2680, էջ 109ա-120բ (1371-8 թ.), Թ. 1523, էջ 158բ-167ա (ժ. Դ.), Թ. 3787, էջ 57բ-68ա (ժ. Դ.), Թ. 4676, էջ 187ա-195բ (ժ. Դ.), Թ. 4709, էջ 144ա-153ա (ժ. Դ.), Թ. 1524, էջ 180բ-190ա (1401 թ.), Թ. 4670, էջ 178ա-187ա (1401 թ.), Թ. 1521, էջ 74բ-79բ (1404 թ.), Թ. 993, էջ 146ա-154բ (1456 թ.), Թ. 2711, էջ 449բ-452ա (1480 թ.), Թ. 4822, էջ 144ա-150բ (1491 թ.), Թ. 4677, էջ 51ա-56ա (ժ. Դ.), Թ. 4802, էջ 146ա-154ա (ժ. Դ.), Թ. 4803, էջ 52ա-56ա (ժ. Դ.), Թ. 4789, էջ 211ա-216ա (ժ. Դ.), Թ. 84, էջ 182բ-185ա (1614 թ.), Թ. 9063, էջ 131ա-134բ, Թերի (1623 թ.), Թ. 992, էջ 255ա-258բ (1651 թ.), Թ. 1952, էջ 163ա-172ա (ժ. Դ.), Թ. 1397, էջ 380ա-381բ (1735-7 թ.), Թ. 9622, էջ 232-294 (1858 թ.): Պարսամի (Բարսումայի) վարքի ալիւալլ իմբադրութիւն, ներքի մատենադատութիւնը տե՛ս Թ. ԱՆԱՍԵԱՆ, Հայկական մատենագիտութիւն, հատ. Բ, Երեւան, 1976, էջ 1437-1441:

անտի, բայց միայն զաւրուփիւն բանին եւ պատմողականն, եւ այս ոչ ըստ ապիկար իմոյ զաւրուփեան, այլ ըստ Հոգւոյն Աստուծոյն տը-
չութեան, մանաւանդ ի՞նչ է սիրոյ] աստի աւժանդակու-
թեանց...»¹⁴² :

Ն. Եպս. Պողարեանը յիշեալ Գրիգոր քահանայ թարգմանչին ենթադրաբար ասորի է համարում¹⁴³ : Դա միանգամայն հաւանական է թոււմ, եթէ նկատի ունենանք Ներսէս Շնորհալու կողմից նրա թարգմանութեանը տրուած որակումը. «ըստ Ասորոց շարդիարդի եւ ծամածուռ, անյարմար եւ աշխարհաւրէն բանիցն զոյր, եւ ոչ ըստ մերոյ]ին աղին սիղոբաից պայծառ եւ յոգնապաճոյճ քառից» :

Որոշ ձեռագրերում պատահող մի այլ յիշատակարանում նշոււմ է նաեւ թարգմանութեան թուականը. «Թարգմանեցաւ պատմութիւն երանելոյս ի թուականիս Հայոց ի նորում շրջանի յամի քառասնե-
րորդի, հրամանաւ տեառն Գրիգորի Հայոց կաթողիկոսի, ի մայ-
րաքաղաք Մելիտինի, ընդ հովանեաւ սրբոյն Գրիգորի, ձեռամբ Գրի-
գորի մեղապարտ կրանաւորի, ի քարեխաւսութիւն ինձ եւ ի փառս
ամենասուրբ երրորդութեանն յաւիտեան եւ յաւիտեանից յաւիտեանս,
ամէն»¹⁴⁴ : Թարգմանութիւնն, այսպիսով, կատարուել է Հայոց Փռք
թուականութեան քառասունմէկերորդ տարում, որ համապատասխա-
նում է Քրիստոսի ծննդեան 1125 թուականին¹⁴⁵ :

Կիլիկեան շրջանում ասորերէնից կատարուած միւս հայերէն
թարգմանութիւնների իրադրութեան հանգամանքների մասին նոյն-
պիսի յիշատակարանային տեղեկութիւնների բացակայութեան պատ-
ճառով հարկադրուած ենք սահմանափակուել նշուած երկերի նկարա-
դրութեամբ : Այդուհանդերձ, ակնյայտ է, որ յիշատակուած թարգ-
մանութիւններն անգամ, եթէ նոյնիսկ բացառենք վերջին հինգ պըր-
ուածքները, քաւականին ջջափելի պատկերացում են տալիս հայ
թարգմանական տրականութեան քնադաւառում ասորի վարդապետ-
ների խաղացած դերի մասին :

142. ՄՄ, ձեռ. Թ. 1522, էջ 482բ :

143. Ն. ԵՊՍ. ԵՈՎԱԿԱՆ (Պոպարեան), Օտարագգի հայերէնագլոսմեր, էջ 446 :

144. ՄՄ, ձեռ. Թ. 2680, էջ 120բ : Տե՛ս նաեւ նոյն մատենադարանի ձեռ. Թ. 993,
էջ 154բ, Թ. 3787, էջ 68ա :

145. Երուսաղէմի Ս. Յակոբեանց զբաղարանի Թ. 3152 (1384 թ.) ձեռագիր ձառըն-
տրում (էջ 256ա), սակայն, նշուած է թարգմանութեան մի այլ թուական :
Ներսէս Շնորհալու բուն յիշատակարանին կցուած է հետեւեալը. «ի թուա-
քերութեանն յաբեղական տուամարիս ԾԶԶ թարգմանեցաւ ճառս», այսինքն՝
1137 թուականին (տե՛ս Ն. Եպս. ՊՈՎԱՐԵԱՆ, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց
Յակոբեանց, հատ. 9, Երուսաղէմ, 1979, էջ 386) : Մեզ առելի հաւանական է
թոււմ 1125 թուականը, քանի որ Շնորհալու յիշատակարանը զորուած է ու-
սանողական, վերամբարձ ռոմով, միեւրեւ հասուն Շնորհալուն բնորոշ է պարզ,
տրամաբանական շարադրանքը :

* * *

Եզրակացութիւն. Հայ-ասորական յարաբերութիւնների պատմութեան մէջ ԺԲ-ԺԳ. դարերը բնութագրւում են որպէս երկու ժողովուրդների ամենասերտ կապերի եւ անմիջական շփումների դարաշրջան: Դա պայմանաւորւած էր նախ եւ առաջ Կիլիկիան հայկական պետութեան գրաւած աշխարհագրական դիրքով եւ բուն երկրում ու նրա սահմանակից գաւառներում հայ եւ ասորի բնակչութեան համագոյակցութեամբ: Հայերի եւ ասորիների միջեւ եկեղեցական-պաշտօնական հոգի վրայ տեղի ունեցող երկարատեւ շփումները եւ առօրեայ յարաբերութիւնները իրենց նկատելի հետքն են թողել նաեւ ժամանակի մշակութային կեանքի լայնագաւառում: Անդնահատելի է ասորի գիտնականների խաղացած դերը արաբական եւ ասորական բռնկութեան եւ բնագիտութեան նուաճումները հայերին փոխանցելու գործում: Ակնյայտ է նաեւ հայ թարգմանական գրականութեան մէջ ասորի թարգմանիչների մուծած նշանակալից աւանդ. բաւական է նշել, որ Կիլիկիան շրջանում ասորերէնից կատարւած հայերէն թարգմանութիւնների մօտաւորապէս կէսը իրագործուել է ասորի վարդապետների մասնակցութեամբ: Եթէ Ե. դարում, երբ հայկական մատենագրութիւնն ապրում էր դեռեւս իր սկզբնաւորման շրջանը, հայ գիտնականները գիտելիքներ հայթայթելու նպատակով մշտապէս դիմում էին դէպի ասորական մշակոյթի կենտրոնները, ապա ԺԲ-ԺԳ. դարերում իրենք ասորիներն են իրենց գանձերը սկուտեղի վրայ մատուցում հայերին: Ասորական մշակոյթի անկման մի նոր արտայայտութիւնը հանդիսացող այս երեւոյթի մէջ իր դրսեւորումն է գտել սեփական հոգեւոր արժէքները կորստից փրկելու համար մի աւելի կենսունակ մշակոյթի փոխանցելու մտահոգութիւնը:

(Շար. 1)

Լ. Յ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ

Résumé

LE RÔLE DES SYRIENS DANS LA VIE CULTURELLE
DE LA CILICIE DU XII^e AU XIII^e S.

L. H. PETROSSIAN

Les XII^e et XIII^e siècles constituent une époque de contacts solides et directs entre les Arméniens et les Syriens dans l'histoire des relations arméno-syriennes, contacts conditionnés tout d'abord par la situation géographique de l'Etat arménien de Cilicie et ensuite par la cohabitation des populations arménienne et syrienne dans le même pays et dans les provinces limitrophes. Les liens quotidiens de longue date entre les Eglises officielles arménienne et syrienne ont laissé des traces importantes dans la vie culturelle de l'époque. Le rôle des savants syriens dans la transmission aux Arméniens des acquits par les Arabes et les Syriens dans le domaine de la médecine et des sciences naturelles, est inestimable. De même des traducteurs syriens ont un grand mérite dans la littérature de traduction arménienne. Il suffirait de noter qu'environ la moitié des traductions arméniennes, à partir du syriaque, a été effectuée avec la participation de prêtres syriens. Au V^e siècle, lorsque débutait la littérature arménienne, les savants arméniens se rendaient continuellement dans des centres culturels syriens pour y puiser des connaissances scientifiques. Or, du XII^e au XIII^e s., les Syriens eux-mêmes servent aux Arméniens, comme sur un plateau, leurs trésors culturels. Conscients du risque de perte de leur propre culture et soucieux de sauvegarder leur propre patrimoine culturel, ils le transmettent à une autre culture plus vivante.